



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի ընթերցող,

Քո դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսի չորրորդ համարը: Հոդվածներ են ներկայացված հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ «Գրադարան. տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Բուհական գրադարաններ», «Մատենագիտություն. տեսական և գործնական խնդիրներ», «Գրքագիտություն», «Մշակութային ժառանգություն»: Ներառված են նաև հաղորդումներ: 1666 թ. մարտ ամսին, երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո, մի խումբ նվիրյալներ Ոսկան վարդապետ Երևանցու գլխավորությամբ Ամստերդամում սկսեցին հայերեն Աստվածաշնչի տպագրությունը, որը հաջողությամբ ավարտվեց 1668 թ. հոկտեմբեր ամսին: Ամսագրում հատուկ սյունակ ենք հատկացրել այս դարակազմիկ իրադարձությանը. սույն համարում ևս տեղադրել ենք հաղորդում նվիրված Սիդնեյում կազմակերպված գիտաժողովին:

Պահպանելով նախորդ համարներում որդեգրած մոտեցումը՝ ներառել ենք մեկ մագիստրոսական ավարտաճառ:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՆԵՐՍԵՍ

Հայաստանում ԱՄՆ դեսպանության
տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի տնօրեն

ԹՂԹԱՅԻՆ, ԹԵ՛ ԹՎԱՅԻՆ

Բանալի բառեր՝ ընթերցանություն, թվային, էլեկտրոնային, գիրք, գրադարան
Keywords. reading, digital, electronic, book, library

Ժամանակակից մարդուն ժամանակը չի բավականացնում, իսկ տեղեկատվական ռեսուրսներն առատ են: Օգտագործողները տեղեկատվություն գտնելու բազմաթիվ միջոցներ և աղբյուրներ ունեն: Հարկավոր նյութի կամ ռեսուրսների ընտրության դյուրությունը և հարմարավետությունը, տեղեկատվության ստացման ազատ մուտքի ապահովումը և օգտագործումը, անհրաժեշտ ամեն ինչ արագ գտնելու կարողությունը և պահանջը շատ բան է փոխել գրադարան-ընթերցող փոխհարաբերության մեջ: Շատ համալսարաններ և կրթական հաստատություններ անցել կամ անցնում են էլեկտրոնային դասարանների և առանց թղթային գիրք ուսուցման մեթոդներին:¹ Տեղեկատվության առատությունը և համացանցի միջոցով անհրաժեշտ տեղեկատվության որոնման դյուրությունը շատերի մեջ թյուր կարծիք է ձևավորել, թե համացանցն արդեն կարող է փոխարինել գրադարաններին, որ հանրային գրադարանների կարիքը չկա, որ Գուգլը կարող է փոխարինել գրադարանավարին, իսկ Վիքիպեդիան կարող է պատասխանել բոլոր հարցերին: Այդ մտայնությանն ինչ-որ չափով նպաստում է նաև թվային բովանդակության և էլեկտրոնային գրքերի շուկայի հարաճուն տեմպերով զարգացումը: 2004 թվականին ԱՄՆ արվեստների ազգային հիմնադրամի կողմից գրքի և ընթերցանության ոլորտի վերաբերյալ անցկացված «Կարդալ, թե՛ չկարդալ» ուսումնասիրությունը ցույց տվեց, թե որքան է վտանգված գեղարվեստական գրքի ընթերցանությունը: Վիճակը համեմատելով նախընթաց ընդամենը 10-20 տարիների հետ ուսումնասիրողները եզրակացնում էին, որ երիտասարդ տարիքի ամերիկացիներն ավելի պակաս ժամանակ են հատկացնում ընթերցանությանը, ընթերցողական հմտությունները կորսվում են և այն կհանգեցնի լուրջ քաղաքացիական, սոցիալական, մշակութային և տնտեսական հետևանքների:² 2016-ի ապրիլին ամերիկյան Փյու հետազոտական կենտրոնի

¹Jeffrey R. Di Leo, "The Cult of the Book-and Why It Must End," Chronicle of Higher Education, September 26, 2010. <http://www.chronicle.com/article/from-book-to-byte/124566>, Accessed Feb.15, 2017.

²To Read or Not To Read ; A Question of National Consequence, Research report #47, November 2007, Office of Research & Analysis, National Endowment for the Arts. <https://www.arts.gov/sites/default/files/ToRead.pdf>

կողմից անցկացված հարցումը ցույց է տվել, որ ամերիկյան գրադարանների մոտ 90%-ը ընթերցողներին նաև էլեկտրոնային գրքեր է առաջարկում:³ 2013-ին Մեծ Բրիտանիայի 8-16 տարեկան 34,910 սովորողների շրջանում անցկացված հետազոտության համաձայն նրանց 39%-ը ամենօրյա ընթերցանության համար էլեկտրոնային սարքեր են օգտագործում, և միայն 28%-ն է ամեն օր տպագիր նյութերից օգտվում: Հարցվածներից նրանք, ովքեր էլեկտրոնային տեքստեր են կարդում, երեք անգամ ավելի պակաս են նշել, որ հաճույք են ստանում ընթերցանությունից և 30%-ով ավելի պակաս են սիրելի գիրք վկայակոչել:⁴ Մյուս կողմից՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրադարաններում գրանցված ընթերցողներն ավելի հաճախ են օգտվում թվային սարքերից, քան նրանք, ովքեր չեն օգտվում գրադարաններից:

20-րդ դարի երկրորդ կեսին քաղաքակրթական մի նոր հեղափոխություն տեղի ունեցավ: 1962 թ. Մարշալ Մաքլուենի «Գուտենբերգի գալակտիկան. Տպագիր դարաշրջանի մարդու արարչագործությունը» գրքի⁵ հրապարակվելուց ի վեր տպագիր գրքի դարաշրջանի ավարտի մասին քննարկումները չեն դադարում: Ժամանակակից աշխարհում համացանցը և թվային տեխնոլոգիաները արմատապես փոխել են տեղեկատվության ոչ միայն տարածումը, այլև տեքստային բովանդակության թղթային և թվային տարբերակների ընկալման եղանակը: Փոխվել են ընթերցանության բնույթը և ընթերցողը: Ակնհայտ է, որ թվային սարքերից օգտվել են նախընտրում նոր, երիտասարդ սերնդի ընթերցողները, իսկ ավագ սերունդը դեռևս նախապատվությունը տալիս է թղթին: Նման պատկեր է դիտվում ամբողջ աշխարհում: Վերջին երկու տասնամյակում հարյուրավոր, եթե ոչ հազարավոր գիտական հոդվածներ և բազմաթիվ գրքեր են գրվել այս թեմայով, որոնցում համեմատության մեջ են դրվում և մատնանշվում ավանդական թղթային գրքի և էլեկտրոնային գրքի առավելությունները:⁶ Թղթից կարդալու կողմնակիցները նշում են ավանդական գրքի պարզությունը, հարմարությունը, գրքի հետ ոչ միայն աչքերով, հայացքով, այլև ֆիզիկական շփման, թղթի ֆակտուրան զգալու, էջերը թերթելու, գրքի հոտը, նրա շունչը զգալու կարևորությունը: Այստեղ, անշուշտ, դեր ունեն նաև ավանդույթի

³ Horrigan, John, Libraries 2016: Trends in visiting public libraries have staidied, and many Americans have high expectations for what their local libraries should offer, Տե՛ս <http://www.pewinternet.org/2016/09/09/libraries-2016/>

⁴Reading Literature Makes Us Smarter and Nicer. From the Brilliant Report at: <http://ideas.time.com/2013/06/03/why-we-should-read-literature/print/> accessed on Feb.15, 2017:

⁵McLuhan Marshall, The Gutenberg Galaxy: The Making of Typographic Man, Toronto, University of Toronto Press, 1962, 292p.

⁶Grant Peggy, Reading Digital vs Reading Paper: New Challenges. Տե՛ս <https://www.clarity-innovations.com/blog/pgrant/reading-digital-vs-reading-paper-new-challenges>, accessed on Feb.15, 2017; Vandendorpe Christian, "Some Considerations about the Future of Reading" /Digital Studies, Vol 2, No 2 (2011).

ուժը և նոստալգիան: Գրքի հետ գրեթե երկուհազարամյա շփման արդյունքում մարդը կապվել է գրքին, և գիրքը մարդեղենացվել է:

Իրենց հերթին, էլեկտրոնային գրքերը նախընտրողները մատնանշում են այդ սարքերի և թվային բովանդակության ու տեքստերի հետ աշխատանքի արագությունը, նյութի փնտրելիությունը, կես գրքաչափ սարքի մեջ մի ամբողջ գրադարան ունենալու հնարավորությունը: Թվային գրքերի ընթերցանությունը հիպերտեքստային կապերի շնորհիվ ընթերցման նոր որակներ է ավելացնում: Եթե թղթային գրքի ընթերցանության ժամանակ ընթերցողի միակ օգնականը նրա խելքը, իմացությունը և երևակայությունն են, ապա էլեկտրոնային գիրք կարդալիս ընթերցողը կարող է լրացուցիչ նյութեր ներգրավել համացանցից: Օրինակ՝ եկեք միասին «թերթենք» Րաֆֆու «Սամվել» վեպի թվային տարբերակը: Վեպն սկսվում է «Երկու սուրհանդակներ» գլխով, որտեղ սուրհանդակները շտապում են Մամիկոնյանների Ողական ամրոցը: Հիպերտեքստային կապերի շնորհիվ կարելի է զուգահեռ տեղեկանալ Մամիկոնյան իշխանական տոհմի մասին, իմանալ Ողական ամրոցի տեղը, քարտեզի վրա հետևել, թե որ ճանապարհով Հայաստան արշավեց Շապուհը և այլն:

Շուկայում հայտնվելու առաջին տարիներին շատերը գրում էին էլեկտրոնային գրքերի՝ տեսողության վրա բացասական ազդեցության մասին, որը տեխնոլոգիական զարգացումների շնորհիվ այսօր, կարծես թե, հաղթահարված է: Այնուամենայնիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քնելուց առաջ էլեկտրոնային ընթերցիչներով կարդալը նվազեցնում է մելատոնինի արտադրությունը, մի հորմոն, որը մարդու մարմինը նախապատրաստում է քնելու: Մյուս կողմից՝ էլեկտրոնային ընթերցիչներով կարդալու ժամանակ տեքստի և տառերի մեծությունը կարգավորելու (մեծացնելու, փոքրացնելու) հնարավորությունն օգնում է դիսլեքսիայով⁷ մարդկանց բարելավել ընթերցողական ունակությունները⁸:

Ժամանակակից ճանաչված ռուս նեյրոլինգվիստ Տատյանա Չեռնիգովսկայան 12 կետով ներկայացրել է գրքի, ընթերցանության և ինտելեկտի վրա համացանցի ու տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը⁹: Դրանց մի մասին արդեն անդրադարձանք վերևում: Չեռնիգովսկայայի դիտարկումներից կարելի է առանձնացնել ևս մի քանիսը: Ըստ նրա՝ ժամանակակից մարդն ավելի ու ավելի է կախման մեջ ընկնում տեղեկույթի արտաքին կրիչներից: Շատ առաջնային անհրա-

⁷Դիսլեքսիան սովորելու կամ կարդալու դժվարություն կամ խանգարում ունենալն է, որը բնութագրվում է կարդալու դժվարությամբ:

⁸Տե՛ս <http://www.cbsnews.com/news/kindle-nook-e-reader-books-the-best-way-to-read/>

⁹Տե՛ս 12 разоблачающих цитат нейролингвиста Татьяны Черниговской о книгах, чтении и интеллекте.

Link: <https://goo.gl/LgVDnR>

Ժեշտ տեղեկություններ մենք կամավոր հանձնում ենք համակարգչային սարքերին և այլևս չենք մտապահում դրանք: Միշտ հույսներս դնում ենք նրա վրա, որ երբ էլ դրանք պետք գան, կարող ենք գրպանից կամ պայուսակից դուրս բերել բջջային հեռախոսը կամ որևէ այլ թվային սարք և գտնել հարկավոր տվյալը: Թեև համացանցը կատարյալ չէ, սակայն որևէ փաստ կամ տեղեկություն ճշտելու համար որոնողական համակարգերը և առաջին հերթին Գուգլը շատ օգտակար են: Սակայն լուրջ հետազոտական աշխատանքի համար ո՞վ կարող է վստահել միայն թվային պաշարներին:

Մեկ ուրիշ դիտարկում, որը ցույց է տալիս, թե որքան են սոցիալական կամ web 2.0 տեխնոլոգիաները ներթափանցել մեր առօրյայի մեջ: Ըստ Չեռնիգովսկայի՝ համացանցն աստիճանաբար ջնջում է հեղինակի և ընթերցողների միջև սահմանները, և ընթերցողները վերածվում են համահեղինակների: Վիքիների և սոցիալական այլ հարթակների լայն տարածումն իրոք համացանցը լցրել է տարատեսակ նյութերով, որոնց հեղինակին կամ հեղինակներին դժվար է առանձնացնել: Համացանցի բնույթն է այդպիսին, որը թույլ է տալիս տարբեր տեղերից կտրել, պատճենել և իրար սոսնձել տարբեր հեղինակների խոսքը, գաղափարները, վերլուծությունները և այլն:

Ստացվում է, որ ժամանակակից մարդը փաստորեն երկու ուղեղ է գործածում: Մեկը մեր սեփականն է՝ բնությունից և Աստծու կողմից մեզ շնորհված, մյուսը՝ արհեստական ուղեղ, որին մարդիկ կամովին փոխանցում են իրենց ուղեղի գործառույթների մի մասը: Ակնհայտ է դառնում, որ մենք ուղեղի մտապահելու գործառույթը հանձնել ենք թվային սարքերին և **առայժմ** մեզ ենք վերապահում քննադատական մտածողության և վերլուծության գործառույթները: Մարդկային ուղեղը զարգացման երկարատև ճանապարհ է անցել: Այն հղկվել, հարստացել և ձևավորվել է մարդկության անցած միլիոնավոր տարիների ընթացքում: Ուստի մարդու ուղեղին ժամանակ է պետք հարմարվելու համար քաղաքակրթության վերջին մի քանի տասնամյակների բերած փոփոխություններին: Արդյո՞ք մարդն ի վիճակի է կարճ ժամանակում վերափոխել այն, ինչը միլիոնավոր տարիների աստիճանական զարգացման արդյունք է: Ինչո՞ւ ենք մենք թերահավատությամբ վերաբերվում ինքներս մեզ և ավելի ու ավելի կախման մեջ հայտնվում տեխնոլոգիական սարքերից:

Տարբեր խմբերի ընթերցողական վարքագիծն ուսումնասիրելով՝ մեդիա մասնագետները, սոցիոլոգներն ու հոգեբաններն ուշագրավ եզրահանգման են եկել: Պարզվում է, որ թվային ընթերցող սարքերի միջոցով ընթերցանությունը և ավանդական թղթային կրիչներից ընթերցումը տարբեր կերպ են ընկալվում և յուրացվում

ընթերցողների կողմից: Նման կապի առկայությունն են մատնանշում մի շարք հետազոտողներ (Աննա Մանգեն, Նորվեգիա, Դանա Բադուլեսկու¹⁰, Ռումինիա, Նիկոլաս Կար և Մարիաննա Վուլֆ, ԱՄՆ)¹¹:

Ամերիկացի լրագրող և էսսեիստ Սվեն Բիրկերտսն իր «Գուտենբերգի էլեգիաներ. ընթերցանության ճակատագիրը էլեկտրոնային դարաշրջանում»¹² գրքում ի թիվս բազմաթիվ այլ հարցերի անդրադառնում է նաև դանդաղ կամ այսպես կոչված, խորքային ընթերցանության հարցերին: Թեև թվային միջավայրը մեծապես ազդել և շարունակում է ազդել ավանդական գրքի և գրադարանային գործի վրա, դժվար է պատկերացնել ընթերցողի խորասուզումը էլեկտրոնային տեքստերի մեջ, քանի որ տեղեկատվության նոր կրիչները նոր արագություն և տեմպ են պահանջում: Մինչդեռ բարդ գեղարվեստական տեքստեր կարդալիս ընթերցողը հեղինակից ոչ պակաս իմացություն և գիտելիքներ պիտի ունենա արժարժված թեմայի, խնդրի կամ իրողության վերաբերյալ: Խորքային ընթերցանությունը խաղ ու պար չէ, այլ երբեմն տքնություն է պահանջում, որ կարողանաս «խորասուզվել, բանալ գաղտնիքները նոցա» (Ե. Չարենց, «Տաղ՝ ձոնված գրքերին»):

Որպեսզի լավ ընկալենք ընթերցանության նշված կերպափոխությունները, հարկ է նախ հետ գնալ պատմության խորքը՝ այն ժամանակները, երբ դրվում էին ժամանակակից գրքի ձևի և կերպարանքի հիմքերը: Պարզվում է, որ ուղիղ կապ կա տեքստի բովանդակության և ձևի միջև: Ժամանակակից լրագրերի սյունակների չափը և մեծությունը, ժամանակակից գրքի էջի ծավալը (տողերի երկարությունը, էջի չափը) սկիզբ են առել դեռևս պապիրուսի փաթեթների վրա տեքստի գրառման ընդունված չափերից (8-12 սմ, և յուրաքանչյուր տողում մոտավորապես 30 նիշ): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդկային աչքը առավելագույն արդյունավետությամբ է ընկալում հենց այդ չափերի մեջ մատուցվող տեքստը: Եթե տողերի երկարությունը ավելի երկար է, լրագրային նյութն այլևս ընթեռնելի չէ: Պարզվում է նաև, որ մարդկային աչքը կարդալիս տողերին հետևում է ոչ թե տող առ տող, այլ մի տեսակ փոքր ցատկումներով, ասես սկանավորման եղանակով: Եվ երբ տողերը երկար են, մարդ կորցնում է հայացքը կենտրոնացնելու հատկությունը և շփոթում է տողերը, կորցնում ընթերցանության թելը:

Ի տարբերություն գրքի՝ համացանցային էջերի ընթերցանությունն այլ մեթոդով է: Վեր կայքերը ոչ թե ընթերցվում են, այլ դիտարկվում: Օգտվողները վեր

¹⁰ Badulescu, D. (2016). Reading in the digital age. *Philologica Jassyensia*, 12(1), 139-149.

Retrieved from <https://search.proquest.com/docview/1810493806?accountid=172684>

¹¹ Ст'ю Вне фокуса: как меняется чтение в цифровую эпоху: <http://special.theoryandpractice.ru/reading>

¹² Sven Birkerts, *The Gutenberg elegies: the fate of reading in an electronic age*, New York: Fawcett Columbine, c1995.

Էջերը զննում-կարդում-դիտարկում են անգլերեն F տառի նմանողությամբ: Նախ հայացքով անցնում ենք էջի վերևի մասով, ապա փոքր-ինչ ներքև ևս մի անգամ զննում ենք տեքստը, ապա հայացքը վերից վար է իջնում: Առաջիններից մեկն այդ մասին դեռևս 1997-ին գրել է դանիացի ժամանակակից համակարգչային մասնագետ Ջեյքոբ Նիլսենը (Jacob Nielsen): Նա ամերիկյան 79 հեղինակային արտոնագիր ունի, որոնց մեծ մասը վերաբերում է համացանցից օգտվելու հարմարավետության խնդիրների ուսումնասիրությանը: 2008թ-ին արված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ օգտվողները միջին հաշվով կարդում են կայքէջի տեքստի 20%-ը, և հարցվածները խուսափում են կարդալ ընդարձակ պարբերությունները: Համացանցից օգտվողներն ավելի շուտ տեղեկություններ են քաղում, քան թե կարդում են: Մարդիկ ավելի շուտ բանալի բառեր են որոնում, հայացքով փորձում են գնահատել տեքստը՝ ասես որոշելու՝ արժե կարդալ այն, թե ոչ: Փորձառու օգտվողները որոշ հաջողությունների են հասնում: Նրանք, ովքեր կարողանում են տեքստը կարդալ ոչ թե ձախից աջ, այլ անկյունագծով՝ վերևից ներքև, ասես հայացքով սկանավորում են տեքստերը և ուշադրությունը կենտրոնացնում բանալի բառերի և արտահայտությունների վրա: Առանց նման հմտությունների տիրապետման մարդը չի կարող գլուխ հանել տեղեկատվական հոսքերից: Հարկավոր է արագ գնահատել և որոշել, թե որ նյութերն են առավել օգտակար տվյալ թեման ուսումնասիրելու համար: Իսկ առանց առկա տեքստերի և նյութերի գնահատման և զտման տեղեկատվական հոսքերին անհնար է հետևել:

Ընթերցանության և տեքստի ընկալման վրա համացանցի ազդեցության վերաբերյալ թեժ բանավեճեր սկսվեցին, երբ 2008 թ-ին լրագրող Նիկոլաս Կարը հրապարակեց իր՝ **«Արդյոք Գուգլը մեզ չի՞ հիմարացնում»** հոդվածը¹³: Կարը խոստովանում է, որ սկսել է դժվարանալ ընդարձակ տեքստեր և պարբերություններ կարդալիս: Նա պատկերավոր համեմատությամբ ինքն իրեն համեմատում է ջրասուզակի հետ, որը նախկինում լողում էր բառերի ծովի խորքերում, իսկ Գուգլի դարաշրջանում ընդամենը սահում է բառերի մակերևույթի վրայով: Հարցում անելով իր գործընկերների շրջանում՝ նա պարզեց, որ շատերը նման դժվարություններ ունեն: Ժամանակին մի քանի ժամ ընթերցելու և ուսումնասիրություն անելու ընդունակ հետազոտողը 2-3 էջ կարդալուց հետո այլևս նախկինի պես չի կարողանում շարունակել ընթերցանությունը:

¹³ Carr Nicholas, Is Google Making Us Stupid? What the Internet is doing to our brains //The Atlantic, July/August 2008. Retrieved from: <http://www.theatlantic.com/magazine/archive/2008/07/is-google-making-us-stupid/306868/>

Թվային և թղթային գրադարանների համեմատական վերլուծություններ անելիս չպետք է աչքաթող անել մի կարևոր հանգամանք ևս: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոշոր գիտական գրադարանների գրքային ունեցվածքի միայն մի փոքր մասն է թվայնացված և առցանց հասանելիություն ապահովում: Նույնիսկ աշխարհի ամենաժամանակակից և հարուստ համալսարանները դեռևս ի վիճակի չեն ամբողջությամբ թվայնացնելու իրենց ֆոնդերը: Օրինակ՝ 2016 թ. ԱՄՆ առաջատար համալսարաններից մեկի՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանի կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև ներկայումս գրադարանի համալրման համար նախատեսվող հատկացումների 90%-ը տրամադրվում է գրքերի և հանդեսների էլեկտրոնային և առցանց բաժանորդագրությանը, սակայն գրադարանային պահոցների, ինչպես նաև համալսարանի հատուկ հավաքածուների և արխիվների ճնշող մեծամասնությունը դեռևս հասանելի է միայն իբրև ֆիզիկական՝ թղթային և ոչ էլեկտրոնային տարբերակով: Համալսարանում պաշտպանված թեզերի միայն 38%-ի թվային տարբերակն է մատչելի: Մենագրությունների միայն 8 տոկոսն է թվայնացված, իսկ արխիվներն ու հատուկ հավաքածուները թվայնացված են ոչ ավել, քան 1 տոկոսի չափով¹⁴: Այնպես որ առնվազն գիտական գրադարանների հավաքածուների մեծ մասը դեռևս հասանելի է միայն թղթային տարբերակով:

Համաձայն հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովում (2016, հոկտեմբերի 17-19) Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանի ներկայացրած զեկուցման՝ «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում գրանցված է 125,457 անուն հայերեն գիրք, որից թվայնացված է 6,184-ը, որը կազմում է հայ գրքի մոտավորապես 5%-ը:¹⁵

Սակայն վաղ թե ուշ գրադարանների ողջ տպագիր ունեցվածքը կթվայնացվի: Թերևս տպագիր գրքերի որոշ տեսակներ կպահպանվեն (մանուկների համար գրքերը), սակայն գրադարանները կարող են անցնել թվային բովանդակության սպասարկմանը: Քանի որ ամեն ինչ թվայնացված կլինի, ուստի գրադարանները ֆիզիկական տարածք չեն զբաղեցնի կամ ավելի քիչ տարածքի կարիք կունենան: Գրադարանային աշխատողների թիվը զգալիորեն կպակասի: Դրա արդյունքում գրադարանները մեծ գումարների խնայողություն կանեն: Ներկայումս միջին հաշվով գրադարանների բյուջեի մոտ 40 տոկոսը հատկացվում է համալրմանը, մնա-

¹⁴ Institute-wide Task Force on the Future of Libraries; Preliminary Report, October 24, 2016. Link --<https://future-of-libraries.mit.edu/sites/default/files/FutureLibraries-PrelimReport-Final.pdf>

¹⁵ Զարգարյան Տիգրան, Չորրորդ համաժողով. կատարված աշխատանքների ամփոփում, Հայկական գրադարանների միջազգային չորրորդ համաժողովի նյութեր: 2016 թ., հոկտեմբերի 17-19: Հայաստան <http://www.flib.sci.am/arm/archive/image/conf.html>

ցած գումարի առյուծի բաժինը՝ ավելի քան 50 տոկոսը աշխատավարձի վճարմանը, իսկ մնացածը՝ գրադարանների պահպանության ծախսերին:

Մի՞թե գրադարաններն այլևս անելիք չունեն:

Գրադարանները ստիպված են ընդունել ժամանակակից մարտահրավերները և մրցակցության մեջ մտնել համացանցային հարթակների հետ: Չէ՞ որ գրադարաններն էլ իրենց առավելություններն ունեն: Համացանցային շտեմարանների համեմատ, որոնք շահույթ հետապնդող նախաձեռնություններ են, գրադարանները անվճար են սպասարկում: Գրադարաններն ունեն գիտելիքների հարուստ պաշարներ և հսկայական կուտակած փորձ: Այս հատկանիշները և գրադարանների բարձր հեղինակությունը վստահություն են ներշնչում, և հասարակությունը ցանկանում է պահել և աջակցել գրադարանների զարգացմանը, նրանց աճին: Բացի այդ՝ գրադարանները կարևոր առաքելություն ունեն շարունակական կրթության ապահովման գործում: Եթե վերանան գրադարանները, ապա որտե՞ղ, ո՞ւմ օգնությամբ են հետբուհական շրջանում մասնագետները լրացնելու իրենց գիտելիքները:

Գրադարան հաճախելը և ընթերցանությունը բարեբախտաբար շարունակում են մնալ մարդկանց ամենասիրելի զբաղմունքների շարքում: Նկատվել է, որ այն ընտանիքներում ծնված ուսանողները, որտեղ համեմատաբար ավելի մեծ ընտանեկան գրադարաններ կան, ավելի շատ են կարդում, քան գրադարան չունեցող ընտանիքներում մեծացող ուսանողները¹⁶: 2013 թ. նոյեմբերին Եվրամիության անդամ 20 երկրներում Եվրոպական հանձնաժողովի կողմից անցկացված «Հատուկ եվրաբարոմետր 399. մշակութային հասանելիություն և մասնակցություն»¹⁷ հարցման համաձայն՝ գիրք կարդալը եվրոպացիների համար երկրորդ կարևոր մշակութային զբաղմունքն է հեռուստացույց դիտելուց հետո: Գրադարան հաճախելն այդ ցանկում զբաղեցնում է 7-րդ հորիզոնականը: Եվրոպացիների 31%-ը առնվազն մեկ անգամ հաճախել է գրադարան, որը 4 տոկոսով նվազ է 2007 թ. համեմատությամբ: Գրադարանների հաճախելիության առումով վիճակն ավելի լավ է Միացյալ Նահանգներում: 2016 թ. ապրիլին Փյու հետազոտական կենտրոնի կազմակերպած ամենամյա հարցման համաձայն՝ 16 և ավելի բարձր տարիքի ամերիկացիների 53%-ը տարվա ընթացքում մի քանի անգամ հաճախել է գրադարան: Նույն հարցման տվյալներով ամերիկացիների միայն 19%-ն է պատասխանել, որ երբեք գրադարան չի հաճախել:

¹⁶ <https://www.arts.gov/sites/default/files/ToRead.pdf>

¹⁷ http://www.internationalpublishers.org/images/annual-reports/2015_online_statistics.pdf

Մինչև 30 տարեկան հարցվածների 47%-ը տարվա ընթացքում էլեկտրոնային գրքեր է կարդացել¹⁸:

Թվայնացումը և նոր տեխնոլոգիաները ձեռնոց են նետել գրադարաններին և ստիպում են փոփոխությունների գնալ: Առաջիկա տարիներին մենք հավանաբար կտեսնենք գրադարանային շատ գործառույթների իրականացումը միայն ու միայն համացանցային հարթակների միջոցով: Մարտահրավերները բազմաթիվ են: Եթե նախկինում ընթերցողը կարող էր ուզած գիրքը կարդալ գրադարանում և իր կարդացածը միայն իրեն էր հայտնի, ապա թվային տեքստեր կարդալիս մարդը հայտնվում է վերահսկողության ներքո: Մարդը կորցնում է իր անձնական կյանքի գաղտնիության ևս մեկ դրսևորում: Ապագայի գրադարանը ոչ այնքան գրքեր է առաջարկելու, որքան կապերի և հաղորդակցության հնարավորություններ: Վաղվա օրը այն գրադարաններին է, որոնք ավելի մեծ տեղ կհատկացնեն նոր տեխնոլոգիաներին, գրադարանի ավտոմատացմանը համացանցին և սոցիալական հարթակներին, ավելի շատ ծրագրեր կառաջարկեն իրենց օգտատերերին և ընթերցողներին, կներգրավվեն իրենց համայնքային ծրագրերում, գրադարանի տարածքը կծառայեցնեն համայնքային կարիքներին, կթվայնացնեն գրադարանը և վերջապես ավելի ակտիվ ու բանիմաց գրադարանավարներ կունենան: Եվ պետք չէ մտածել, թե թվային դարաշրջանի մարտահրավերները հայաստանյան գրադարաններին անմիջականորեն չեն վերաբերում: Դրանք նաև մեր խնդիրներն են: Եվ որքան շուտ գիտակցենք, այնքան ավելի պատրաստ կլինենք գրադարանային գործի այսօրվա և վաղվա զարգացումներին:

SUMMARY

In the feature article "Print or Digital?" the author, Nerses Hayrapetyan, shares his views on the differences between reading online and reading printed material. He discusses the role libraries, books, and reading in general play in the modern age. What perspectives will we have of traditional libraries in the future? Will libraries disappear or will they be forced to change due to the battle between print and digital reading? What effect will e-books have on the reading environment? The author sees reading print material and reading on electronic devices as two different and parallel methods of acquiring information. He believes that hard copies won't decrease in popularity any time soon and for at least another decade e-books will be forced to coexist with printed books. However, in order to compete and set themselves up for success in the future, libraries must begin changing their strategy to compete with new technologies.

¹⁸Horrigan, John, Libraries 2016, տե՛ս նույն հոդվածում:

ՄԵԼԻՔՔԵԿՅԱՆ ՆԱԻՐԱ

*Հայաստանի ազգային գրադարանի
Գրադարանային գրիդ տեխնոլոգիաների
գիտահետազոտական կենտրոնի ղեկավար*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՅՔԷՋԸ
ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԴԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ**

Բանալի բառեր՝ գրադարանի կայքէջ, համացանց, թվայնացում
Keywords. The Library, Website, Internet, Digitization

XXI դարում գիրքը, որպես տեղեկատվության պահպանման և փոխանցման միջոց, չի կորցնում իր կարևորությունը և շարունակում է մնալ քաղաքակրթության զարգացման կարևոր գրավականներից մեկը: Ներկա ժամանակաշրջանում գրադարանները, հանդիսանալով տպագիր արտադրանքի սպասարկման և երկարաժամկետ պահպանման վայր, պետք է իրենց առօրյա աշխատանքում շեշտը դնեն նաև թվային տեխնոլոգիաների կիրառմանը: Ներկայումս գրադարանները տեղեկատվական տեխնոլոգիաների կողմից ընձեռած հնարավորությունների հիման վրա սկսել են մատուցել զանազան նոր ծառայություններ: Պատճառը գրադարանավարների ակտիվ դերակատարությունն է տեղեկատվական հասարակության կայացման գործում:

Ավտոմատացումը փոխեց ավանդական գրադարանի տեսքը ինչպես գրադարանավարի, այնպես էլ օգտվողի համար: Այստեղ է առաջանում գրադարանների կայքէջերի ստեղծման անհրաժեշտությունը, որոնք կծառայեն որպես հարթակ թվային գրադարանի այցելուների համար, և որի շնորհիվ այցելուները հասու կդառնան գրադարանի կողմից մատուցվող ծառայություններին: Այսօր գրադարանները՝ որպես տեղեկատվական կենտրոններ, ունեն զարգացման նոր հնարավորություններ, ուստի գրադարանային կայքէջը այս առումով մեծ դերակատարություն ունի:

Հայաստանի ազգային գրադարանի (ՀԱԳ) կայքէջը առաջին անգամ համացանցում ակտիվացվել է 2009 թ.: 2011 թ. առաջարկվեց կայքէջի նոր տարբերակը, իսկ 2016 թ. ընթերցողին ներկայացվեց կայքէջի նորացված տարբերակը, որում հաշվի են առնված տեխնոլոգիական արդի ձեռքբերումները: Կայքէջը նախորդի համեմատ ունի մի շարք առավելություններ՝

- **Ունի պարզ կառուցվածք.** հեշտ ընկալվող բաժիններ և հրամաններ, մաքուր և ընկալելի նախագծում, որը թույլ է տալիս առաջին անգամ մուտք գործած ընթերցողին միանգամից ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները:
- **Այն ոչ միայն արդիական է, այլև հարմար:**
- **Կայքէջը հասանելի է դյուրակիր թվային սարքերի համար** (խելացի հեռախոսներ, պլանշետներ, թվային գրքերի ընթերցիչներ և այլն): Նման սարքերը հնարավորություն են տալիս օգտվել համացանցից ցանկացած վայրում, ինչին իր հերթին մեծապես նպաստեց արագագործ անլար ցանցի զարգացումը: Այս պայմաններում գրադարանին անհրաժեշտ էր ունենալ իր կայքի այնպիսի տարբերակ, որը համատեղելի կլիներ նաև շարժուն (mobile) սարքերի համար: Կայքի միջերեսը և ցուցադրվող բաժինները հարմարվում են այդ կրիչների պաստառների չափսերին, և կայքից օգտվելը կամ ընթերցանությունը դառնում է ավելի հաճելի:
- **Ապահովված է կայքէջի համապատասխան անվտանգությունը.** ՀԱԳ-ի կայքէջը ունի բոլոր անհրաժեշտ պաշտպանիչ միջոցները՝ ծրագրահեղձների հարձակումներից պաշտպանվելու կամ ընթերցողի չմտածված գործողություններին դիմակայելու համար: Սրանք ապահովվում են բովանդակության կառավարման նորագույն համակարգի ներդրման շնորհիվ, որը կառավարում է ՀԱԳ-ի կայքէջը:

Կայքի կարևորագույն և առաջնային մաս է հանդիսանում գլխավոր էջը, որը Հայաստանի ազգային գրադարանի «կառույցի» ճակատն է, նախագծերի ցուցափեղկը: Այստեղ տեղադրվել են ամենակարևոր հղումները (միջոցառումներ, էլեկտրոնային նյութեր, նորություններ, ծառայություններ և այլն):

Նպատակի իրագործման համար ուսումնասիրվել են այլ կայքէջեր, տեսական և գործնական ձեռքբերումները: Ուշադրություն ենք դարձրել՝

- Գրադարանի կայքէջի ստեղծման առանձնահատկություններին:
- Կայքէջի՝ համացանցում մատչելիության ապահովման խնդիրներին և անխափան կազմակերպմանը:
- Կառուցվածքին, միջերեսին, էջերի բովանդակությանը:
- Սոցիալական ցանցերի հետ ճկուն կապին:

Ինչպես և ցանկացած կայք, գրադարանի կայքը ևս ունի իր առանձնահատկությունները: Սակայն մինչև այդ առանձնահատկություններին անցնելը դիտարկենք ինտերնետ-կայք հասկացությունը: Ի՞նչ է դա:

Կայքէջը որոշակի կազմակերպության, առանձին մարդու կամ մարդկանց խմբի ներկայացվածությունն է համացանցում: Եթե իրական կյանքում հիմնարկը նոր մասնաճյուղ բացելու համար կառուցում է նոր շենք, ստեղծում է ենթակառուցվածք (անցկացնում է էլ. հոսանք, ջուր), ապա վիրտուալ աշխարհում բացում է ինտերնետ-կայք, որի համար նույնպես անհրաժեշտ է հատուկ ենթակառուցվածք¹:

Ցանկացած ենթակառուցվածք դա համակարգ է: Տվյալ դեպքում՝ ծառայությունների և օբյեկտների համակարգ, որը նախատեսված է կայքի լիարժեք աշխատանքի համար: Որպես ծառայություններ հանդես են գալիս տեխնոլոգիաները, օրինակ՝ հետադարձ կապը, էլեկտրոնային փոստը և այլն, իսկ որպես օբյեկտներ՝ կոնկրետ տեխնոլոգիաների կիրառությունները, օրինակ՝ հետադարձ կապի ձևը:

Ենթակառուցվածքի հիմնական նպատակն է ապահովել կայքում տեղադրված պաշարների արդյունավետ օգտագործումը և տեսանելիության ապահովումը: Մասնավորապես, առանց մտածված և աշխատող նավարկման համակարգի օգտատիրոջը դժվար կլինի կողմնորոշվել կայքում:

Եթե այցելենք համաաշխարհային առաջատար գրադարանային կայքեր (Բրիտանական գրադարան, ԱՄՆ Կոնգրեսի գրադարան, Ֆրանսիայի ազգային գրադարան) կարելի է նկատել, որ չնայած նախագծի, կառուցվածքի տարբերություններին, դրանք ունեն շատ ընդհանուր գծեր, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև.

1. Պարզ կառուցվածք, որը թույլ է տալիս առաջին անգամ մուտք գործած ընթերցողին միանգամից ստանալ իրեն հետաքրքրող հիմնական հարցերի պատասխանները: Նա պետք է առանց դժվարությունների, առանց գուշակության հասկանա, որ գտնվում է նորությունների բաժնում և ոչ թե ընթերցողների ֆորումում:

2. Ենթակառուցվածք: Այն պետք է լինի ոչ միայն արդիական, այլև հարմար: Գրադարանային կայքի նախագծողը պետք է մանրակրկիտ մշակի տարբեր ծառայություններ՝ սկսած ճիշտ նախագծված և կառուցած նավարկությունից մինչև էլեկտրոնային քարտարանները, հետադարձ կապի ձևից մինչև անձնական կաբինետը և այլն: Կարևոր է ապահովել հետաքրքրությունների հավասարակշռություն ընթերցողի, նախագծողի և գրադարանի աշխատակազմի

¹ «Современная библиотека» Научно-практический журнал о библиотеках, чтении и книге № 4(44) /2014-Современные будни: Книгохранилища армянской книги(Тигран Заргарян/ директор Национальной библиотеки Армении, ст. 80-85):

միջև, քանի որ այս կամ այն ծառայությունների ներդրման ժամկետները և արժեքները կարող են լինել շատ մեծ: Այլ խոսքերով կայքը պետք է լինի հարմար և հասկանալի ոչ միայն օգտվողներին, այլև կայքի կառավարչին և խմբագրին:

3. Բովանդակությունը: Կայքը մշակելու ժամանակ այս հարցը պետք է լինի առաջնային: Յուրաքանչյուր պատվիրատու նախագծողի հետ միասին պետք է պատասխանի հետևյալ հարցին՝ «Իսկ ինչ ենք մենք ուզում տեսնել մեր կայքում (ավելի ճիշտ ինչ կուզեին այնտեղ տեսնել մեր ընթերցողները և ինչ կարող ենք մենք նրանց առաջարկել)»:

4. Գրադարանային կայքի աշխատանքի իրավական տեսանկյունը: Գոյություն չունի խիստ տարբերակում այն էլեկտրոնային նյութերի, որոնք գրադարանը ներկայացնում է համացանցի միջոցով և կայքի եզակի բովանդակության միջև (ֆոտոալբոմ, գրքերի նորույթներ և տեսություններ, վիրտուալ ցուցադրություններ): Բոլորն էլ թվային բովանդակություն են, սակայն հարցն այն է, որ այդ բովանդակությունը պետք է ներկայացվի հեղինակային իրավունքի նորմերի պահպանմամբ: Բոլոր սահմանափակումները (հեղինակային իրավունք, նյութի օգտագործման ժամկետ) պետք է խստորեն պահպանվեն: Բանն այն է, որ ընթերցողը ոչ թե պարզապես հեռավար կարողանում է ստանալ տեղեկատվություն, այլ նա գրադարանային ծառայության միջոցով *օրինական* տեղեկատվություն է ստանում: Սա է գրադարանային կայքի կարևոր տարբերությունը համացանցը հեղեղած էլեկտրոնային գրադարաններից, ֆայլային պահուստներից, որոնցում հեղինակային իրավունքի նորմերը կոպտորեն ոտնահարվում են:

5. Հանգույցները /պորտալները/²: Հանգույցը տեղեկատվության խոշոր կուտակիչ է, ուր միավորվում են առանձին կայքեր և ծառայություններ և որը օգտատերերին հնարավորություն է տալիս մեկ պատուհանի սկզբունքով օգտվել տարածապես բաշխված նյութերից: Ստեղծելով իրենց կայքէջերը համացանցում՝ գրադարանները հաճախակի ընտրում են պորտալային լուծման տարբերակը՝ որպես այլընտրանք սովորական կայքին: Դա կարող է լինել արդեն գոյություն ունեցող նախագիծ, որին գրադարանը միանում է որպես գործընկեր (օրինակ՝ europeana.eu) կամ սեփական հանգույցը (Հայաստանի գիտատեղեկատվական հանգույցը): Վերջինիս դեպքում գրադարանը հանդես է

² «Современная библиотека» Научно-практический журнал о библиотеках, чтении и книге № 4 (44) /2014-Современные будни: Книгохранилища армянской книги(Тигран Заргарян/ директор Национальной библиотеки Армении, ст. 80-85):

գալիս որպես հիմնադիր կամ համահիմնադիր, օրինակ՝ Նյու-Յորքի հանրային գրադարանի կայքը կամ Հարվարդի համալսարանի գրադարանի կայքը, կամ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի կայքը: Այս տարբերակը արդիական է խոշոր գրադարանների համար, որոնք ունեն մասնաճյուղերի լայն ցանց կամ դուստր կազմակերպություններ (տպարաններ, թանգարաններ):

Գրադարանային կայքի տեխնիկական մշակման մեջ հիմնական գործող անձը նա է, ով պատասխանատու է ողջ նախագծի համար, ինչպես նաև նախագծողի և պատվիրատուի, գրադարանավարի և դիզայների, միջերեսի ծրագրավորողի և կայքի խմբագիր-գրադարանավարի միջև փոխգործունեության համար և այլն: Ընդհանրապես նախագծի ղեկավարը համարվում է կապող օղակ բոլոր հետաքրքրված անձանց միջև: Այսպիսով, նախագծի հաջողությունը կամ անհաջողությունը կախված է գրագետ ղեկավարումից:

Մինչ նախագծի մշակումը, անհրաժեշտ է կատարողի հետ խորհրդակցելուց հետո կազմել մանրակրկիտ տեխնիկական առաջադրանք: Առանց բազմակողմանի մշակված տեխնիկական փաստաթղթավորման նախագիծը դատապարտված է ձախողման: Նախագծի մշակումը օգտակար է նաև պատվիրատուին, քանի որ դրա բացակայության դեպքում անհնարին է կազմակերպել արդյունավետ երկխոսություն կատարողի հետ, իսկ առանց փաստաթղթավորման ոչ մի կատարող չի զբաղվի նախագծմամբ:

Տեխնիկական առաջադրանքը պետք է ներառի հարցեր՝ կապված կայքի կառուցվածքի, դիզայնի, ծառայությունների, այլ տեխնիկական լուծումների հետ: Կողմերի իրավունքները և պարտականությունները, աշխատանքների կատարման ժամկետները, դրանց արժողությունը կազմվում են առանձին պայմանագրի տեսքով:

Կայքը մշակելու ընթացքում կարևորը կանգ չառնել նախորդ նախագծի արդեն ձեռք բերված փորձի վրա (սեփական և օտար): Տեխնոլոգիական նորարարությունները պետք է հիմնվեն առկա պաշարների վրա: Անհրաժեշտ է որպեսզի կայքի նախագծի քննարկմանը մասնակցեն հնարավորինս մեծ թվով հետաքրքրված անձիք. գրադարանի բաժնի վարիչներ, խմբագիրներ, տեղեկատու գրադարանավարներ և այլն:

Գրադարանային կայքը կարող է ընդլայնվել և թարմացվել՝ ստեղծելով նոր բաժիններ, օրինակ՝ էլեկտրոնային փաստաթղթերի շաբլոններ (ցուցահանդեսներ, շնորհանդեսներ, գրքային կատալոգներ և այլն) կամ զարգացնել

գրքի պատվիրման կամ ժամկետի երկարացման էլեկտրոնային ձևաթերթիկը (ավելացնելով ձևում նոր դաշտեր կամ «զանգ կայքից» հնարավորություն):

Վերջապես, ցանկացած կայքի կարևորագույն բաղկացուցիչ է հանդիսանում գլխավոր էջը: Գլխավոր էջը «կառույցի» շքամուտքն է, նախագծի ցուցափեղկը: Այստեղ պետք է տեղադրվեն ամենակարևոր հղումները: Կարելի է տեղադրել նաև որևէ գրաֆիկական լուծում (սլայդ-ցուցադրություն, պանորամային ֆոտո), որևէ նորություն գրադարանային կամ ընթերցողների կյանքից կամ գրադարանային ֆոնդից եզակի հրատարակությունների ցուցադրություն և այլն:

Հայաստանի ազգային գրադարանի կայքէջի համար կիրառվել են հետևյալ ծրագրա-տեխնիկական լուծումները. Ուբունտու Լինուքս օպերացիոն համակարգի վրա տեղադրված է Ապաչ վեբ-կայանը, ՊէյՋՊ ծրագրավորման լեզվով իրականացվել են ծրագրավորման աշխատանքները, իսկ Մայեսթրուէլը ծառայում է որպես բովանդակության պահպանման և կառավարման համակարգ: Նաև տեղադրված է ծրագրային համակարգեր, որոնք ապահովում են կայանի անվտանգությունը՝ firewall, iptables, ip spoofing, ddos, deny host:

Հայաստանի ազգային գրադարանի կայքէջի պահանջվող մոդուլների նշանակությունը, կառուցվածքը և կիրառումը ունեն հետևյալ տեսքը՝ Web system CMS Drupal, թեման Impact Theme, front end user friendly, mobile version css: Դրուփալը կայքերի կառավարման համակարգ է: Դրուփալը բաց կոդով ազատ ծրագիր է: Բովանդակության կառավարման այս համակարգը հնարավորություն է տալիս ստեղծել տարբեր տիպի կայքեր՝ բլոգներ, ֆորումներ, նորությունների բլոկներ և այլն:

Հայաստանի ազգային գրադարանի կայքէջում արտացոլված են գրադարանի գործառույթները: Թվային գրադարան ստեղծելիս կարևոր հանգամանք է օգտվողների պահանջների և կարիքների հաշվառումը: Պետք չէ առաջնորդվել «եկեք ստեղծենք և օգտվողներն իրենք կգան» սկզբունքով: Ընդհակառակը, անհրաժեշտ է հետազոտել և հասկանալ, թե ի՞նչ ակնկալիքներ ունեն օգտվողները թվային գրադարաններից, ի՞նչ տեսքով կցանկանային հաղորդակցվել բովանդակային շտեմարանների հետ, ծառայությունների ինչպիսի՞ ցանկ է հարկավոր նրանց, և վճարման ի՞նչ մեխանիզմներ են գործելու առօրյա աշխատանքի ընթացքում: Չնայած մոտեցումների ողջ բազմազանությանը, այնուամենայնիվ, թվային գրադարանների ստեղծման գործընթացը, թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն, զարգանում է լայն թափով:

Տարբեր էլեկտրոնային շտեմարանների, ինչպիսիք են «Հայ հնատիպ գրքի», «Հայ մամուլի» և այլ շտեմարանների ստեղծումը, կայքէջում համապատասխան հղումների տեղադրումը, հնարավորություն են ընձեռում հայ տպագիր ժառանգությունը հավուր պատշաճի ներկայացնելու ողջ աշխարհին:

Հայաստանի ազգային գրադարանը վաղուց հատել է պարզապես գիրք սպասարկող ավանդական գրադարանի սահմանը: Գրադարանը, լինելով *հիբրիդ*, իր մեջ ներառում է թե՛ ավանդական, թե՛ թվային պաշարներ, որոնք ամեն օր թարմացվում և շտկվում են միտված ընթերցողի գիտական և ընթերցողական պահանջների բավարարմանը: Նշենք, որ գրադարանը քայլում է ժամանակին համահունչ՝ գրադարանային ծառայությունները մատուցելով էլեկտրոնային տարբերակով: Ընդգծենք հատկապես ընթերցողների գրանցումը էլեկտրոնային ձևաչափով: Շուկայական գործունեության տեսանկյունից գրանցման համակարգը օգնում է ընթերցողներին առանց ժամանակ կորցնելու դառնալ գրադարանի օգտատերերից մեկը:

Հայաստանի ազգային գրադարանի կայքէջը, հասանելի է www.nla.am հղումից: Այստեղ ընթերցողները կարող են ծանոթանալ գրադարանում թվայնացված տպագիր ժառանգությանը, էլեկտրոնային քարտարանին, նորություններին, միջոցառումներին, նվիրատվություններին, Գրադարանների և գրադարանային գործի մասին ՀՀ օրենքին և կառավարության հաստատած կարգերին: Կայքէջի յուրաքանչյուր մաս ներառում է համապատասխան տեղեկատվությունը: Թվարկված բաժինները ծառայում են մեկ ընդհանուր նպատակի՝ ընթերցողի պահանջների առավելագույն բավարարմանը և նրանց աշխատանքի հեշտացմանն ու արագացմանը: Հայաստանի ազգային գրադարանի կայքէջի առանձնահատկություններից են՝

1. Միջերեսի բազմազանությունը,
2. Բազմալեզու բովանդակությունը,
3. Ներկայացվածությունը սոցիալական ցանցերում,
4. Կապը Վիկիպեդիա ազատ հանրագիտարանի հետ
5. Տեղեկատու, ուղղորդող և լրիվ տեքստային էլեկտրոնային շտեմարանների առկայությունը:

Կայքէջում առկա են հետևյալ հնարավորությունները՝ այցելությունների վիճակագրություն, հետադարձ կապ, RSS-ի արտահանում, որոնում «Համահավաք գրացուցակում», նորություններ, օգտատերերի կողմից նյութերի խմբագրում և այլն: Նշենք, որ կայքէջում առկա բազմազան ծառայությունները յուրահատուկ

գովազդային և մարքեթինգային առաջարկ են ընթերցողական լսարանի համար: Մեր կարծիքով, այն իր մեջ ընդգրկում է ինտերնետ-գովազդի, սոցիալական մեդիայի մարքեթինգի, որոնողական առաջխաղացման բոլոր բաղադրիչները և ապահովում՝ մաքսիմալ արդյունք:

Ներկայացնենք կայքէջի առաջնաէջում ներառված ամենապահանջված ծառայությունները՝

- Հանրային թվային գրադարան
- Մուտք Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ
- Գրանցման կարգը
- Տեղեկություններ գրադարանի աշխատանքային ժամերի մասին
- Նորություններ
- Հայտարարություն
- Նվիրատվություններ
- Հասցե

Հանրային թվային գրադարան-ի ներքո ներկայացված են թվային գրադարանին բնորոշ էլեկտրոնային պաշարները՝ էլեկտրոնային քարտարաններ, մատենագիտական-տեղեկատու շտեմարաններ, լրիվ տեքստային նյութերի շտեմարաններ: Այստեղ կարելի է ծանոթանալ գրադարանում թվայնացված տպագիր ժառանգությանը: Ազգային գրադարանում տեղադրված են արդյունաբերական հզոր տեսածրիչներ: Հենց դրանց միջոցով իրականացվում է թվայնացումը: Թվայնացված նյութերը հասու են դառնում համացանցում մետատվյալների հետ միասին, մատենագիտական տվյալների համար բացառապես օգտագործվում են Բաց/Ազատ կոդերով ծրագրային լուծումները:

Գրադարանային կայքէջը սերտորեն կապված է սոցիալական ցանցերի հետ: Սոցիալական ցանցը առցանց ծառայություն է, որը միավորում է մարդկանց համացանցում որևէ հատկանիշի հիման վրա, սովորաբար ըստ հետաքրքրությունների³: Սոցիալական ցանցերի առավելություններն են՝

- Վստահության բարձր մակարդակը, որը ավելի բարձր է պաշտոնական աղբյուրների նկատմամբ:
- Արագ կապի միջոց, առաջին ձեռքից տեղեկատվություն ստանալու հնարավորություն և ցանկացած հարցերին պատասխան ստանալու հնարավորություն:

³https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D6%81%D5%A1%D5%B6%D6%81 -Վիքիպեդիա. Ազատ հանրագիտարան:

- Կապի բազմաթիվ միջոցներից օգտվելու հնարավորություն (տեքստ, ձայն, շարժում, պատկեր և այլն):

Գրադարանի վարվելաձևը սոցիալական ցանցերում պետք է կայանա հետևյալում՝

- Ելնելով գրադարանի ընդհանուր ռազմավարությունից, որոշել նրա ներկայության խնդիրները և նպատակները:
- Ձևավորել խումբ, որը կգբաղվի դրանով՝ մասնագիտական մակարդակով:
- Գրանցել գրադարանավարներին համապատասխան սոցիալական ցանցերում (Դիմերես (Facebook), Թվիտեր (Twitter), որոնք առավելագույնս համապատասխանում են նրա գործունեությանը:
- Գտնել խումբ գրադարանին համապատասխան նպատակային ընթերցողներով, օգտագործելով սոցիալական ցանցի փնտրման համակարգը:
- Ընդլայնել աշխատանքը այդ հարթակներում անցնելով պասիվ դիտարկումից դեպի ակտիվ քննարկումների և դառնալով բովանդակության գեներատոր:

Գրադարանի հիմնական նպատակը սոցիալական ցանցերում ընթերցողներին ավելի մոտիկ և հասանելի լինելն է: Ըստ հարցումների՝ գրադարանային էջի ամենաարդիական բաժինը հարցերի բաժինն է, ուր հաճախորդները տեղեկանում են այս կամ այն գրքի առկայության մասին, կարող են ճշտել տեղեկատվությունը գրադարանավարից կամ պարզապես իմանալ գրադարանի հասցեն:

Շատ կարևոր է, որ գրադարանի կայքէջը դառնա ավելի ինտերակտիվ: Դա նշանակում է բլոգների ստեղծման համակարգի ներդրում, առցանց քննարկումների, մրցույթների, միջոցառումների և հարցումների կազմակերպում:

Ընթերցողը պետք է հնարավորություն ունենա ստեղծել իր անձնական բլոգը իր գաղտնաբառով: Բլոգը հնարավորություն է տալիս ընթերցողին գրառումներ թողնել էջի վրա, ներբեռնել նկարներ, տեսաֆայլեր և այլն: Բլոգը պետք է ունենա գրառումների հասանելիությունը կարգավորելու հնարավորություն, այսինքն՝ բաց, փակ կամ կիսաբաց: Ընթերցողները կարող են կիսվել իրենց գրառումներով: Բլոգները կարող են ունենալ նաև թեմատիկ ուղղվածություն՝ միավորելով մարդկանց տարբեր հետաքրքիր գաղափարների շուրջ⁴:

⁴ <http://www.unkniga.ru/biblioteki/bibdelo/1733-budushee-elektr-bibliotek-filosofiya.html> Տեղեկատվական- վերլուծական ամսագրի պաշտոնական էջ:

Գրադարանի կայքէջում կարող են կազմակերպվել քննարկումներ որևէ գրքի, հեղինակի կամ թեմայի վերաբերյալ: Օրինակ՝ կայքէջում տեղադրվում է հայտարարություն, ուր նշվում է, որ որոշ ժամանակ անց կանցկացվի տվյալ գրքի քննարկումը: Այնուհետև այդ օրը և նշված ժամին անցկացվում է բաց քննարկում և կարծիքների փոխանակում: Մրցույթները կարող են կազմակերպվել հետևյալ սկզբունքներով՝ ծանոթանալ որևէ թեմայի, ընթերցել որևէ հեղինակի ստեղծագործություն որոշակի ժամանակահատվածում, այնուհետև ըստ պահանջների որոշել հաղթողին կամ հաղթողներին և բաշխել մրցանակները: Միջոցառումները կարող են ունենալ ուսուցողական, ծանուցողական բնույթ՝ բավարարելու տարբեր ընթերցողական խմբերի հետաքրքրությունները և պահանջները: Հարցումները անհրաժեշտ են՝ գրադարանի, գրքերի կամ տարաբնույթ թեմաների վերաբերյալ ընթերցողների կարծիքներն իմանալու համար: Հարցումը կողմնորոշող միջոց է գրադարանի համար՝ ռազմավարական պլաններ մշակելու հարցում:

Բացի սեփական ինտերակտիվ հնարավորությունների զարգացումից և օգտագործումից, գրադարանը կարող է նաև հանդես գալ որպես գիտական, մշակութային օղակ⁵: Օրինակ՝ գրադարանը կարող է ունենալ «Գրադարանային միջոցառումներ» և «Մասնագիտական ռեսուրսներ», որտեղ կարող են ներկայացված լինել Հանրապետությունում տարվա ընթացքում անցկացվող հիմնական գրադարանային միջոցառումները և հղումներ գրադարանների տեղեկատվական ռեսուրսներին, մեթոդական միավորումներին, մասնագիտական գրականությանը: «Համացանցի ռեսուրսները» բաժնում կարող են ներկայացված լինել ենթաբաժիններ՝ «Լրիվ տեքստային տվյալների բազաներ», «Արտասահմանյան գրադարանների քարտարաններ», «Հայրենական գրադարանների քարտարաններ», «Էլեկտրոնային գրադարաններ» և այլն: «Համալրում» բաժնում ներկայացված են ոչ միայն համալրվող գրքերի, ամսագրերի, էլեկտրոնային տեղեկատվական ցուցակները, այլև աղբյուրների, հրատարակչությունների, նվիրատուների կոնտակտային տվյալները և էլեկտրոնային հասցեները: «Մասնագիտական բաժին» հատվածը գրադարանավարների համար մտքերի, փորձի, գաղափարների փոխանակման հարթակ է: Այստեղ կարող են անցկացվել սեմինարներ, միջոցառումներ, հանդիպումներ գրադարանավարների համար: Ընդգծենք, որ նշված գործառույթներից շատերն արդեն իրականացվում են:

⁵ <http://www.library.ru/3/focus/ebook.php>-Ինֆորմացիոն-տեղեկատվական հանգույց՝ նախատեսված երիտասարդների համար:

Ներկայումս բազմաթիվ մարդկանց համար գրադարան հասկացությունը ասոցացվում է ոչ թե գրքեր տրամադրող հաստատության հետ, այլ գիտելիքի որոնման ագրեգացված հանգույցի հետ, կազմված տարաբնույթ էլեկտրոնային շտեմարաններից:

Անշուշտ, ապագայում գրադարան հասկացությունը էլ ավելի կփոխվի: Դասական տիպի գրադարանը կպահպանվի որպես ավանդական, բայց կփոխի իր դերակատարությունը: Ելնելով այս պնդումից՝ մեր դասակարգումը կբաժանվի երկու մեծ խմբի. վիրտուալ էլեկտրոնային գրադարանների զարգացման հեռանկարները և ավանդական գրադարանների զարգացման հեռանկարները.

SUMMARY

Creating and editing a website of the National Library of Armenia was a complex and important process that consisted of several stages, each of which contained very important tools and informations. Each stage was coordinated information building, links, web editing, and more.

In 2016 we have set ourselves a task to present a new website for the public, that differs from the others, has a simple structure, easy-to-understand sections and commands, a clean and perceptible design, allowing the first-time entering reader to get answers to the questions that interest him. The library needed to have the so-called mobile version of its website, so that the site could be accessed on any electronic carrier. The website is available for portable digital devices (smart phones, tablets, digital readers, etc.).

ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԻՆԵ

*ՀՊՄՀ Թանգարանագիտության,
գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի մագիստրանտ
ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆԱՀԻՏ*

*ՀՊՄՀ Թանգարանագիտության,
գրադարանագիտության և մատենագիտության ամբիոն,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ԳՐՔԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ, ԱՅԲԲԵՆԱԿԱՆ,
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑԱՆԿ
1801-1900 ԹԹ.**

ԱՌԱՋԱԲԱՆ

Սփյուռքահայ գաղութների շարքում ամենապատվավոր տեղերից մեկը պատկանում է վրացահայ գաղութին: Չափազանց մեծ է նրա մատուցած ծառայությունները մեր երկրին ու ժողովրդին: Իր նյութական ու բարոյական օգնությունը նա միշտ հասցրել է ոչ միայն բուն հայրենիքում, այլ նաև սփյուռքի, մասնավորապես, Վրաստանում եղած հայությանը:

Վրացահայ գաղութը մասնավորաբար 19-րդ դարում հայ գրականությանը, առհասարակ հայ մշակույթին, հայ ժողովրդի վերազարթոնքին, հայ ազգայնության և անկախության գաղափարներին և ձգտումներին բերեց մեծապես նկատելի իր նպաստը: Ինքնին մի բացառիկ երևույթ է վրացահայ գաղութը: Վրաստանի քաղաքներում, մասնավորապես Թիֆլիսում հաստատված հայ ժողովրդի զավակների տնտեսական, առևտրային, եկեղեցական, կրոնական, կրթական, մշակութային ազգային-քաղաքական գործունեությունը հայությանը պատիվ բերող իրագործումներ են:

XIX դարի երկրորդ կեսին Թիֆլիսը արդեն հայ գրքի գլխավոր կենտրոնն էր Կովկասում և ամբողջ Ռուսական կայսրությունում: Իբրև Անդրկովկասի և կովկասահայության կենտրոն՝ Թիֆլիսը նույն ժամանակահատվածում սկսում է նկատելիորեն ազդակել արևելահայոց գրահրատարակչությունը, և գլխավորապես այս քաղաքի հայոց տպարանների ու հրատարակչությունների շնորհիվ է, որ շուտով ամբողջ Կովկասում հայ գրքի հրատարակությունը իր ընդհանուր քանակով գրավում է առաջին տեղը:

Վրաստանում տպարանների հաստատման, ստեղծագործական, ինքնագիր և թարգմանական երկասիրությունների հրատարակման, մամուլի ստեղծման ու ծավալման նպատակն էր ժողովրդի լուսավորության, մարդկային և ազգային առողջ ինքնահասակացողության և կյանքը այդպես ապրելու և արժևորելու փիլիսոփայության յուրացման նախանձախնդրությունը, հեռանկարը և առաքելությունը:

Ժողովրդանվեր ուղղությամբ, ժողովրդական խավերի լուսավորության առաքելությամբ էապես բնորոշված վրացահայության կրթական, մշակութային և հրատարակչական-տպագրական լայնածավալ գործունեության մեկ ուրիշ կողմը եղավ առաջադիմական ձգտումը: Սա ի հայտ էր գալիս 19-րդ դարի գրականության մեջ, որի սլաքը ուղղված էր դեպի Հայաստանի և հայ ժողովրդի անկախությունը:

Ինչպես հայ տպագրության, նույնպես և մամուլի ասպարեզում, վրացահայ գաղութը պատվավոր տեղերից մեկն է գրավում աշխարհի բազմաթիվ հայկական գաղութների շարքում: Շուրջ 100 տարվա ընթացքում /1801-1900/ նա տվել է հայ ժողովրդին 1758 անուն հայերեն գիրք և 32 անուն զանազան պարբերականներ: Բավական պատկառելի արդյունք՝ թվով և որակով /տես Ցանկը/:

Ընդհանուր հայացք գցելով Վրաստանում 19-րդ դարում հայերեն տպագիր մշակույթի /գիրք և մամուլ/ արժեքին, մենք կարող ենք միայն երախտագիտության խոսք ուղղել վրացահայ գաղութին, որը ծանր ճիգերի շնորհիվ կարողացավ հայ մշակույթի կանթերը բավական երկար ժամանակ վառ պահել օտար երկրում:

Հայ տպագիր գիրքը, այդ թվում նաև վրացահայ տպագրությունը եղել է հայության ինքնահաստատման և գոյատևելու ձգտման արտահայտությունը: Այն իր ինքնատիպ դիմագծով պատվավոր տեղ է զբաղեցնում հայ մշակույթի գանձարանում:

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ

բ. գ. թ., դոցենտ

Վրաստանում 1801-1900 թվականներին լույս տեսած հայերեն պարբերական մամուլի ցանկ

Փոխուած են պայմաններն ու ժամանակները, եւ շրջանային քաղաքական իրադարձութիւններուն հայու ճակատագրին վիճակած տնօրինումով՝ 1940-1960-ականներու ներգաղթներն ու անոնց յաջորդած արտագաղթները իրենց հետ տարած են սերնդափոխութիւններէ յառաջացած երիտասարդ նոր ուժերէ ակընկալուած՝ բոլոր մարզերու մէջ հերթական առողջ ներդրումները:

Ներկայիս, եգիպտահայ Ազգային Իշխանութիւնները եւ Միութենական կառոյցները, իրենց ամփոփ ուժերով եւ կարելիութիւններով կը գործեն շարունակականութիւնը ապահովելու համար գաղութային հոգեւոր, կրթական, մշակութային, մարզական, երիտասարդական, բարեսիրական-խնամատարական եւ մամուլի հաստատութիւններուն:

Տպարանային հաստատություններու թիւը եւս նուազումի ենթարկուելով՝ ներկայիս Գահիրէի մէջ կը գործեն չորս հայ տպարաններ, իսկ Ադեքսանդրիոյ մէջ մէկ տպարան: Ժամանակագրական կարգով, Գահիրէի մէջ կը գործեն «Ոսկեւտառ Տպարան»ը (1918, 1966-էն), «Նուպար Տպարան»ը (1939-էն), «Աֆրիքըն Փրէս»ը (1969-էն), Նուպար Տպարանի նորահաստատ մասնաճիւղ՝ «Նուպար Տիճիթըլ»ը (2013-էն), իսկ Ադեքսանդրիոյ մէջ՝ «Արաքս Տպարան»ը (1917, 1970-էն):

Եզիպտահայ գրատպութեան եւ տպարանային ասպարէզի հիմնադրութեան 185-ամեակին ընդառաջ կատարուած ներկայ ուսումնասիրական աշխատանքը յաւակնութիւնը չունի ամբողջական ըլլալ, անոր մանրամասնութիւններուն յաւելումը վստահաբար պիտի կատարեն ապագայ հմուտ բանասէրները:

ԳԱՀԻՐԷԻ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ

1. Վիմագրական Մամուլ - Գահիրե , 1832

Զաքարիա Տեր Պետրոսեան, հայրենի Տարօն գաւառի Կոփ աւանէն, հոգեւոր ուսումնառութենէ եւ Երուսաղէմի միաբանութեան իբրեւ անդամ Ս. Էջմիածնի մէջ 1831-ին Եպիսկոպոս օծուելէ ետք, դէպի Ս. Քաղաք իր վերադարձի ճամբուն վրայ 1832-ին եկած է Եգիպտոս, տեղւոյն վանքապատկան կալուածներու հարցով:


Գահիրէի մէջ, Զաքարիա Եպիսկոպոս իր բարեկամ Ակնցի մահտեսի Ալեքսան Եղիազարեանի նիւթական օժանդակութեամբ «Վիմագրական Մամուլ» մը գնած է 1832-ին, եւ առաջին առթիւ «Յայտարարութիւն» մը տպագրած ու հրապարակ՝, պանծացնելու համար Ալեքսան և Յակոբ Եղիազարեան եղբայրներու վաստակը Եգիպտոսի մէջ: ¹

Սոյն «Յայտարարութիւն»ը միակ հրատարակութիւնն է լոյս տեսած Զաքարիա Եպիսկոպոսի «Վիմագրական Մամուլ»ով Գահիրէի մէջ: Այնուհետեւ, այս մամուլը ուղարկուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց հայոց վանքը:

Յիշարժան է, թէ Զաքարիա Եպիսկոպոս եղած է Երուսաղէմի հայոց տպագրութեան հիմնադիրը եւ Զաքարիա Կոփեցի Պատրիարք անունով՝ արժանաւոր հովուապետը եղած է Ս.Աթոռի (1840-1846): ²

2. «ԱՐՄԱԻՆԻ» Տպարան - Գահիրե, 1865

Տպարանը հիմնադրուած է 1865-ին Աբրահամ Մուրատեանի նախաձեռնութեամբ, իր հետ Ֆրանսայէն բերած գիրքերու կազմածով, տպագրելու համար իր խմբագրած առաջին եգիպտահայ կիսամսեայ լրագիրը «Արմաւենի»ն , լոյս տեսած՝ միայն 4 համար, 16 Մարտին 1 Մայիս 1865:



Մուրատեանի Եգիպտոսէն մեկնումով եւ լրագրին հրատարակութիւնը դադրելէն ետք տպարանը եւս փակուած է: ³

3. «ԱՐԱՐԱՏ» Տպարան (Ս.ԴԱՐԲԻՆԵԱՆ) - Գահիրե , 1895-1910

Սարգիս Դարբինեան տպարանը հիմնած է 1895-ին, Գահիրէի Պէյն-էլ-Սուրէն թաղաշրջանին մէջ, ուր տպագրուած են զանազան լեզուներով գիրքեր, տեղեկագիրներ, տոմսեր և լրագիրներ:

Տպարանը 1899-ին եղած է կազմատուն եւ թղթավաճառատուն, Հապպանէյա թաղին Մոհամետ Ալի փողոցին վրայ: ⁴

¹ «Սիոն» Ամսագիր, 1933, թիւ 11

² «Էջմիածին» Ամսագիր, ԿԳ. 63-րդ տարի (Ա), էջ 84-87 :

³ Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար , Արտ.Գարտաշեան , ք.հտր.1982, էջ 49


⁴ Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952) , Յ.Խ.Թովմուզեան, 1978, էջ 96

⁵ «Արշալոյս» Լրագիր , 1899 , Գահիրե, թիւ 3

Հետագային տպարանը կոչուած է նաև «ԱՐԱՐԱՏ-Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ տպարան» (1903, 1907-09):

Տպարանը եղած է եգիպտահայ երրորդ տպարանը եւ երեք գրքոյկ տպագրած է, յաջորդաբար՝ «Կանոնագիր Խորենեան Երկսեռ Վարժարանի» 1895-ին, Սարգիս Դարբինեանի «Հայերէն-Արաբերէն Գրպանի Բառարան»ը 1896-ին և Աւետիս Պալեանի «Մաթիլտ»ը 1897-ին: ⁵

Այնտեղ տպագրուած են «Մաժակ» (1898), «Փիւնիկ» (թիւ 1 և 2, 1899), «Արշալոյս» (1899), «Նոր Օր» (1900), «Ժողովուրդ» (1903-1904 կարգ մը թիւերը), «Աւել» (1909-1910) պարբերականները: Նաեւ, Հայկունի Մ.ի «Անեքդոտներ և ժողովրդային վէպիկներ»ը (1899), Կանոնագիրներ եւ Տարեկան Տեղեկագիրներ:



Ս. Դարբինեան Տպարանին մէջ տպուած են հարսանեկան հրաւերագիրներ, տեղեկագիրներ, նամակագլուխ, տոմսեր, հաշուեցոյցներ, մահազոյներ, յայտարարութիւններ աժան գիներով: Յանձնարարութիւնները փութով կատարուած են 50% կանխիկ վճարելով: ⁶

Տպարանը փակուած է 1910-ին: ⁷

Սարգիս Դարբինեան սրբագրիչ եւ տպագրիչ եղած է Գահիրէի պետական տպարանին մէջ (Էլ-Մաթպաա Էլ-Էիլէյա- Պուլաք), նաեւ աշխատած է Գահիրէի ջուրի ընկերութեան մէջ: ⁸

4. «ՓԱՐՈՍ» Տպարան - Գահիրէ , 1897-1898 , 1901-1902 ,

1918-1927 - «مطبعة المنار» - 1910 - Գահիրէ

Տպարանը հաստատուած է 1897-ին, Յարութիւն Ալփիարի նախաձեռնութեամբ, տպագրելու համար իր խմբագրած «**Փարոս**» (1897-1898/1901-02) լրագիրը:

Տպարան-խմբագրատան հասցէն 1897-ին եղած է Պազար Մուրուր, Գահիրէ:

Տպարանը վաճառուած է 1898-ի կէսերուն: ⁹

Հետագային, սեփականատէրը եղած է Վաղինակ Ռափայէլեան, տպարանը հաստատելով Գահիրէի Մատապէկ փողոցը: ¹⁰



⁵ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ , 2,3 եւ 4

⁶ «Ժողովուրդ», 1904, Գահիրէ , թիւ 15/16

⁷ Տիպ ու Տառ , Թէոդիկ , 1912 , Կ.Պոլիս, էջ 188

⁸ Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար,Ա.Գարտաշեան ,բ.հտր.1982, Վենետիկ,էջ 304

⁹ Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Յ.Խ.Թովմուզեան, 1978, Երեւան, էջ199

¹⁰ Հայահամար Եգիպտոսի եւ Սուտանի - 1939», Գահիրէ, էջ 167

1910-ին, «Էլ Մանար» (ՓԱՐՈՍ) Տպարան անունով հրատարակուած է հայատառ (5 էջ) եւ արաբերէն լեզուի բաժինով (10 էջ) «Գահիրէի Օսմանեան Ակումբի Կանոնագիրը - հիմնական պայմաններ»-ու պրակը: ¹¹

1918-էն սկսեալ, տպարանը կազմակերպուած հաստատութիւն մը եղած է Գահիրէի Քասր Էլ Նիլ փողոցին վրայ, թիւ 50, Բէյ Օֆիսի դիմաց: Հետագային փոխադրուած է թիւ 35, Սոլիման փաշա փողոց հասցէին:

Տպագրուած են «Մարտիկ Աղա» (26-42 համարները, 1921), «Հայկական Սինեմա» (1-39 թիւերը, 1925) եւ «ՀՕԿ» (3 համար, 1926) պարբերականները: Նաեւ՝ տասնեակ մը Կանոնագիրներ եւ Տարեկան տեղեկագիրներ: ¹²

5. «ՄՆՏԻԿԵԱՆ» Տպարան (վիմատպարան) -

Գահիրէ ,1898-1899

Տպարանը հաստատուած է Մնտիկեան Եղբայրներու կողմէ 1898-ին:

Հիմնարկը Գահիրէի խոշորագոյն տպարաններէն հանդիսացած է, օժտուած ըլլալով իր ժամանակի կատարելագործուած մեքենաներով եւ գունաւոր վիմատպագրութեան կարելիութիւններով: ¹³

Տպարանը գործած է զանազան լեզուներու տպագրութիւններով եւ խաւարտէ գունաւոր տուփերու պատրաստութեամբ:

Այստեղ տպագրուած են «Փիւնիկ» կիսամսեայ հանդէսի թիւ 3էն 14 համարները 1899-ին, նաեւ Միհրան Տամատեանի «Ներշնչումներ Ազգային եւ Յեղափոխական Արդի Կեանքէ» (1898), «Հայն ու թուրքը եւ արեւելեան խնդիրը» (1899) հատորները:

Տպարանը յանկարծ փակուած է Նոյեմբեր 1899-ին: ¹⁴

6. «ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ» Տպարան -

նաեւ «ԱՐՇԱԼՈՅՍ» Տպարան - Գահիրէ , 1900 -1914

Տպարանը հիմնուած է 1 Մայիս 1900-ին Եղիշէ Թորոսեանի կողմէ եւ անուանուած՝ իր վաղամեղ դստեր Արշալոյսի անունով:

Հաստատուած է Շարա Ապտիլ Ազիզի սկիզբը, Օսմանիյէ դեղատան դիմացի փողոցին Շէրիֆ Փաշային պարտէզին մօտ: ¹⁵

Հետագային, տպարանին հասցէն եղած է Մոհամէտ Ալի փողոց, Սիթատէլ երկարող թրամվէյի գծին վրայ , Հարթ-Էլ-մատապէկ Էլ Գատիմա թիւ 40 (տիար



Մինաս Շիրինեանի յարկաբաժնին մէջ): ¹⁶

¹¹ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ, թիւ 106

¹² Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 136, 154, 164

¹³ Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Յ.Խ.Թովուզեան, 1978, Երեւան, էջ 199

¹⁴ «Արշալոյս» Լրագիր , 1899 , Գահիրէ, թիւ 44

¹⁵ «Արշալոյս» Լրագիր , 1900 , Գահիրէ, թիւ 76

¹⁶ «Արշալոյս» Լրագիր , 1914 , Գահիրէ, թիւ 25

Տպարանը ճանչցուած է նաեւ «Արշալոյս Լրագրի Տպարան», «Ազգային Տպարան (Արշալոյսի)», «Ժողովրդական Տպարան» և «Տպարան-Թղթավաճառատուն Արշալոյս» (1 Սեպտեմբեր 1900) անուններով:

Եղիշէ Թորոսեանի խմբագրած «Արշալոյս» թերթին գրաշարը եղած է անոր կինը Սաքրուհի Քիւչիքեան, ճանչցուած՝ իբրեւ երրորդ հայ գրաշարուհին հայկական տպարանական ասպարէզին մէջ:¹⁷

Դժուար նախաքայլերէ ետք, տպարանը յառաջընթաց ունեցած է տպագրած է տարբեր լեզուներով գիրքեր, թերթեր եւ կատարած առետրական հրատարակութիւններ:¹⁸

Եղիշէ Թորոսեան 1897-1899 եղած է Գահիրէի Խորէնեան Վարժարանի երաժշտութեան ուսուցիչը: Ան , հրատարակած է «Յիշատակարան» մը, նուիրուած՝ Աղեքսանդրիոյ մէջ Նուպար Փաշայի արձանին բացման հանդիսութեան առթիւ 1904-ին:¹⁹

Տպարանին վարիչ-մատակարարը եղած է Գէորգ Փափագեան, իսկ գրաշարը՝ Պ.Յովսէփ (1901):

Տպարանէն լոյս տեսած են «Արշալոյս» (1900-1905/1908-1914) լրագիրը, «Ժողովուրդ» (1904) եւ «Հորիզոն» (1906) պարբերականները:²⁰

7. «ՄԻՈՒԹԻՒՆ» կամ «ԹՈՐԳՈՄ ՓԱՓԱԶԵԱՆ» Տպարան -

Գահիրէ , 1900 -1901

Տպարանը հաստատուած է 1900-ին, սեփականատէր եւ տնօրէն Թորգոմ Փափագեանի նախաձեռնութեամբ, հասցէ ունենալով Ապտին փողոց, Մուգաթթամ լրագրի դիմաց, Գահիրէ:

Տպարանը գործած է նաեւ «Նոր Օր» տպարան անունով:



Տպագրութիւնը կատարուած է հայերէն եւ եւրոպական լեզուներով ամէն տեսակ հրատարակութիւններու, պարբերաթերթերու, յայտարարութիւններու, հաշուեցուցակներու, եւ այլն: Յանձնարարութիւնները կատարուած են փութով եւ ճաշակաւոր տպագրութեամբ, չափաւոր գիններով:

Տպարանը գոյատեւած է դժուարին նիւթական պայմաններու տակ, տառապելով գրաշարներու պակասէն:²¹

Տպագրուած են «Նոր Օր» լրագրին Ա.տարեշրջանի կարգ մը համարները:

¹⁷Տիպ ու Տառ , Թէոդիկ , 1912 , Կ.Պոլիս, էջ 188

¹⁸Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Յ.Խ.Թովուզեան, 1978, Երեւան, էջ199

¹⁹Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար, Ա.Գարտաշեան - ք.հտր.1982 , Վենետիկ, էջ 457

²⁰Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ.Ս.Ն.Պալարամեան, 2005,Գահիրէ , էջ 16,24,40

²¹Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Յ.Խ.Թովուզեան, 1978, Երեւան, էջ 200

8.«ԱՐՏԷՄԻՍ» Տպարան - Գահիրե , 1902-1903

Տպարանին սեփականատերը 1902-ին եղած է մտատրական ուսուցչուհի Մառի Պելլերեան (Տիկին Աւօ Նազըշճեան), Հայերէն լեզուի ուսուցչուհիներէն՝ Գահիրեի Խորէնեան եւ Գալուստեան Ազգային Վարժարանի:



«Արտէմիս» լրագրի հրատարակութեան առթիւ, տպարանը հաստատուած է Քանթարա-Կէտիտ, Գահիրե հասցէին, արտօնատիրութեամբ՝ Շ. Շիշմանեանի: Լրագիրը առաջին տարին ունեցած է 700 բաժանորդ:

Տպարանէն լոյս տեսած են հայերէն ամէն տեսակ աշխատութիւններ, հանդէսներ, գիրքեր, շրջաբերականներ, նամակագրութիւններ, հրաւերագիրներ եւ այլքարտեր: Կատարուած են նաեւ առեւտրական գործառնութիւններ, գիրքերու եւ զանազան լեզուներով տպագրութիւն: ²²

9.«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ» Տպարան - Գահիրե , 1904

Տպարանը հիմնուած է 1904-ին, նախաձեռնութեամբ Աւետիս Պալեանի, լոյս ընծայելու համար իր խմբագրած «Ժողովուրդ» քննասիրական երկշաբաթաթերթը: Առաջին առթիւ տպագրուած են «Ժողովուրդ»ի թիւ 10 եւ 11 համարները (30 Մայիս – 15 Յունիս 1904): ²³



«Ժողովրդական» տպարանի անդրանիկ հրատարակութիւնը եղած է 21 էջոց «Յայտագիր-Կանոնագիր Համագգային նախնական եւ երկրորդական երկսեռ վարժարանի

1904-1905 դպրոցականտարի» պրակը: ²⁴

Գրաշարական եւ նիւթական դժուարութիւններու պատճառով լրագիրն ու տպարանը փակուած են Դեկտեմբեր 1904-ին: «Ժողովուրդ»ի վերջին թիւ 22-ը լոյս տեսած է 30 Նոյեմբեր 1904-ին:

10.«ԼՈՒՍԱԲԵՐ» Տպարան - Աղեքսանդրիա , Գահիրե , 1904-1909

«ԼՈՒՍԱԲԵՐ-ԱՐԵՒ» Տպարան - Գահիրե , 1909-1913

Տպարանը հիմնուած է Տոքթ.Կարապետ Փաշայեան Խանի նախաձեռնութեամբ Կիպրոսի Որբանոցէն Աղեքսանդրիա բերուած տառերով եւ Գահիրե փոխադրուելով՝ 1904-ին հաստատուած է «Լուսաբեր» թերթի հրատարակութեան համար:

²² Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), Յ.Խ.Թովմուզեան, 1978, Երեւան, էջ 200

²³ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրե, էջ 24

«Ժողովուրդ» , 1904 , Գահիրե , թիւ 11

²⁴ Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պատմութեան Համար , Ա.Գարտաշեան , գ. հտր.1982 , Վենետիկ, էջ 409

«Ժողովուրդ» , 1904 , Գահիրե , թիւ 15/16

Գահիրեի մեջ, տպարանին հիմնադիրները եղած են Տոքթ. Նազարեթ Քելե-ճեան, Վահան Քիրքճեան եւ Յարութիւն Ճեյլճեան: ²⁵

Տպարանը վերանուանուած է «**Լուսաբեր-Արեւ տպարան**», ուր տպագրուած է «**Լուսաբեր-Արեւ**» թերթը 1909-ին:

«Լուսաբեր-Արեւ» տպարանին մէջ տպուած է Ագնես Մ.ի «Երկրաշինութեան Պետքը» 36-էջնոց գրքոյկը 1910-ին: ²⁶




Տպարանը 1 Յունուար 1913-էն հաստատուած է թիւ 17, Մատապէկ փողոց հասցէին, Պանք Նասիոնալին դիմաց (Ժուրնալ Տիւ Գեո-ի ներքեւ): Իսկ, «Լուսաբեր-Արեւ» թերթին խմբագրատան հասցէն եղած է թիւ 19, Էլ Մանախ փողոց, Ա.յարկ («Զօլա» լուսանկարչատան վերեւ): ²⁷

11.«ՄՖԻՆՔՍ» Վիմագրատուն - Գահիրէ , 1905-1911

Տպարանին հիմնադիրը եղած է Արմենակ Մանուկեան 1905-ին, գործակից վարիչ ունենալով Ռեթեոս Մուրա-տեանը:

Հաստատութեան հասցէն ե-ղած է Խալիկ Փողոց, Գահիրէ: ²⁸

Տպարանին գրաշարներէն ե-ղած է Նուպար Սափրիչեան, իսկ տպագրիչը՝ Արմենակ Մանուկեան:



«Մֆինքս» տպարանէն լոյս տեսած են Մալխասի «Էսքիճի Կարօ» (1905), Աղասիի «Զէյթունի Հերոսները» (1906) և «Կանոնագիր Արաբկիրի Կրթաւի-րաց Միութեան» (1911) հրատարակութիւնները: ²⁹

12.«ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ՏԻՐԼԻԿ» Տպարան - Գահիրէ , 1906

Տպարանէն 1906-ին լոյս տեսած է Ռ. Ալիքեան (Ռ. Որբերեան)ի «Ծփանքներ» հատորը: ³⁰

13.«ԹՈՓԱԼԵԱՆ» Տպարան - Գահիրէ , 1908

Տպարանին հիմնադիր-սեփականատէրը 1908-ին եղած է Գ. Թովալեան: Այստեղ լոյս տեսած են զանազան լեզուներով հրատարակութիւններ:

²⁵ Տիպ ու Տառ , Թեոդիկ , 1912 , Կ.Պոլիս , էջ 189

²⁶ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ , թիւ 101

²⁷ «Լուսաբեր-Արեւ» երկօրեայ , 1912, Գահիրէ, թիւ 24

²⁸ Տիպ ու Տառ , Թեոդիկ , 1912, Կ.Պոլիս, էջ 189

²⁹ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ, թիւ 48,56,117

³⁰ Տիպ ու Տառ , Թեոդիկ , 1912 , Կ.Պոլիս, էջ 189

Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս. Ն. Պայրամեան, 2012, Գահիրէ , թիւ 55



Տպարանին լոյս տեսած է Հրանդ Ալատինի խմբագրած «Նշտրակ» քննասիրական պարբերականը (3 թիւ, 1908):³¹

14. «ԶԱՐԵՀ Ն.ՊԵՐՊԵՐԵԱՆ» Տպարան - Գահիրէ, 1909-1926

Տպարանին հիմնադիրը եղած է Զարեհ Ն.Պերպերեան 1909-ին, սկիզբը գործակից ունենալով Աստիկ Զատեանը 1911-1912-ին (հետագային բաժնուած):

Տպարանը հաստատուած է Գահիրէի Ապտին թաղաշրջանի Էլ-Թուպկի Փողոց թիւ 12, հասցէին (Սինեմա «Իտէալ»ի կից, Ոստիկանատան դիմաց) եւ հետագային փոխադրուած՝ Իպրահիմ Փաշա Փողոց:

Պերպերեան մայր տպարանը հաստատուած է Պոլսոյ մէջ 1882-ին:

Տպարանին գիրերու հաւաքածոյին մաս կազմած են այլազան հայերէն, արաբերէն եւ ֆրանսերէն տառեր եւ տպագրական զարդեր:³²




Այստեղ տպագրուած են Սուրէն Պարթեւեանի «Եգիպտահայ Տարեցոյցը» Ա.(1914), Բ.(1915) և Գ. (1916) եւ «Անապատին Յուշարձանը» (1916), ինչպէս նաեւ «Մալէշ» (1911), «Անցած Դարձածներ» (1911-1912), «Հոսանք» (1912) պարբերականները եւ «Գալուստեան Միութիւն» կիսամեան (1913):³³

Տպագրուած են աւելի քան 60 կանոնագիրներ, տեղեկագիրներ, օրացոյցներ եւ վիպային հատորներ:

15. «ՄԻՈՒԹԻՒՆ» Տպարան - «Հ.Բ.Ը.Մ.ի ՄԵՓԱԿԱՆ» Տպարան Գահիրէ, 1912-1933

Տպարանը հաստատուած է Գահիրէի մէջ 1912-ին, նախաձեռնութեամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, լոյս ընծայելու համար «Միութիւն» պարբերականը (1912-1928 Գահիրէ):



Տպարանը հիմնուած է Վահան Մալեգեանի ջանքերով եւ գործած՝ անոր անմիջական հսկողութեանը տակ, Արտաշէս Ազապլարի գրաշարապետութեամբ:

Հիմնարկը հաստատուած է Տիգրան Փաշայի պարտեզին կից մասնաւոր շէնքի մը մէջ:³⁴

Հիմնարկը հաստատուած է Տիգրան Փաշայի պարտեզին կից մասնաւոր շէնքի մը մէջ:

³¹ Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն (1805-1952), 3.Խ.Թովուգեան, 1978, Երեւան, էջ 200

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ.Ս. Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 58

³² «Մալէշ», Զաւեշտական Եօթնօրեայ, 1912, Գահիրէ, թիւ 32

³³ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ

³⁴ Տիպ ու Տառ, Թեոդիկ, 1912, Կ.Պոլիս, էջ 189

Այստեղ տպագրուած են Հ.Բ.Ը.Մ.ի «Տարեկան Տեղեկագիր»ները (1912-էն սկսեալ), «Հ.Բ.Ը.Մ.ի Գործապատումը» (1919), «Հ.Բ.Ը.Մ.ի Ոսկեմատեան»ները (1914 և 1933), ինչպէս նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի կանոնագիրներ, հաշուեկշիռներ եւ հրատարակած՝ հատորները: ³⁵

16. «Յ Ո Ւ Մ Ա Բ Ե Ր» Տպարան - Գահիրէ , 1913-2008

Տպարանը հաստատուած է 1913-ին, նախաձեռնութեամբ «Յուսաբեր»ի հիմնադիր Արմենակ Մեօթէմէտեանի, թերթին հրատարակութեան նպատակով:

Հասցէն եղած է Մատապէկ փողոց, Գահիրէ, «Ժուրնալ տիւ Գէր»ի խմբագրատան ներքեւ: ³⁶

«Յուսաբեր»ի խմբագրութիւնը, վարչութիւնը և տպարանը հետագային հաստատուած են հետեւեալ հասցէներուն.



*Պորսա Էլ Կէտիտա Պողոտայ (Պորսա Խըտիվեալի շէնքին ետեւ), ** թիւ 27, Մաղրապի փողոց, Գահիրէ, B.P.868 (1929), *** թիւ 4, Քամէլ փողոց, Գահիրէ (1932), **** թիւ 4, Իպրահիմ Փաշա փողոց, Գահիրէ (1935), և ***** թիւ 56, Թէրաս Էլ Պուլաքէյա փողոց, Քօլալի, Գահիրէ (1952):

«Յուսաբեր»ի տպարանը 1952-ին հաստատուած է նորակառոյց «Յուսաբեր»ի Տան մէջ, օրաթերթին խմբագրատան, տնօրէնութեան, վարչական գրասենեակներուն եւ գրատան բաժիններուն կողքին, օժտուելով ժամանակի տողաշարական արդի կազմաձևերով ու տպագրական մեքենայով:

Նոր տողաշար կազմաձևերով եւ Արտաշէս Ազապլարի գրաշարապետութեամբ լոյս տեսած է «Յուսաբեր»ի 27 Յունիս 1953-ի համարը եւ Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն» 600 էջոց հատորը:



Վարչական պատասխանատու եղած է Գէորգ Զէքիճեան (1927-1948) Գրաշարներէն եղած են

Արտաշէս Ազապլար (գրաշարապետ), Գասպար Աժտէրխանեան, Ազատ Խաչատուրեան, Դաւիթ Շահլամեան (1929-1932), Արմենակ Խաչատուրեան (մինչեւ Յունիս 1947), Հայկ Հաճի Պօղոսեան, Վարդէս Տէօվլէթեան (մինչեւ 1948), Յարութիւն Գարաճեան, Պետրոս Մխտիկեան, Միրիճան Մանավեան, Սարգիս Զէրտէլեան, Մկրտիչ Սէփէթճեան, Արմենակ Մանուկեան, Սարգիս Խըրխչեան,

³⁵ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ

³⁶ «Յուսաբեր» Երկօրեայ , 1913 , Գահիրէ, թիւ 89

Հայկազ Առաքելեան, Ստեփան Գույումճեան, Յովհաննէս Մասմանեան եւ Սարգիս Մասմանեան:

Տպարանը 1945-էն ի վեր, հովանաւորութիւնը վայելած է «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան:

«Յուսաբեր»ի տպարանէն լոյս տեսած են «Յուսաբեր» երկօրեայի եւ օրաթերթի համարները եւ «Յուսաբեր» ամսագիրը (1944-1948): Հրատարակուած են «Յուսաբեր» Մատենաշարի 1923-էն սկսեալ հարիւր հատորները: Տպագրուած են «Յուսաբեր»ի տարեկան օրացոյցները, բազմաթիւ գիրքեր, կանոնագիրներ, տեղեկագիրներ եւ ձեռնարկ-հանդիսութիւններու յայտագիր-պրակներ: ³⁷

Տպարանին մէջ տպագրական աշխատանքը դադրած է 2008-ին:

17.«Մ.ՇԻՐԻՆԵԱՆ» Տպարան – Գահիրէ , 1915-1923

Տպարանը հիմնած եւ սեփականատէրը եղած է Մ. Շիրինեան 1915-ին:

Տպարանին մէջ հրատարակուած են Վարդան Չազարեանի եւ Սուրեն Պարթեւեանի գիրքերը (1915) եւ «14 Գաղթականներու Կադանդչէքը» պրակը (1915):

Այստեղ լոյս տեսած են շարք մը օտար լեզուներով հրատարակութիւններ:

1923-ին կատարուած է «Արշին Մալ Ալան»ի Բ.տպագրութիւնը: ³⁸

18.«ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ» Տպարան - Գահիրէ , 1916-1962

Տպարան-Կազմատուն եւ Գրատան հիմնադիր-սեփականատէրը եղած են Յակոբ եւ Վահրամ Գալէմքեարեան եղբայրները 1916-ին:

Տպարանը յաջորդաբար հաստատուած է * Պէրքէթ-Էլ-Պաքարա Փողոց, թիւ 11, Ֆակկալա (1930) - ** Թէվֆիք Փողոց, թիւ 25 (1931), ***Սուլթան Հիւսէյն Փողոց, թիւ 3, Հէլիոպոլիս (1933), **** Իսմայիլ Փողոց, թիւ 22 , Հէլիոպոլիս (1940)



Վահրամ Գալէմքեարեան 1962-ին Գանատա գաղթելով, տպարանատիրութիւնը ստանձնած է եղբայրը՝ Յակոբ Գալէմքեարեան եւ կարճ ժամանակ ետք, տպարանը փակուած է:

Տպարանէն լոյս տեսած են «Փունջ» Մանկապատանեկան (1928), «Աշխատանքի Կոչ» (1932), «Լոյս» (1936), «Ազատ Միտք» (1936-1937, Արշամ Տատրեանի «Բանաստեղծին Ձայնը» (1938), Հ.Բ.Ը.Մ.ի «Ամսօրեայ Տեղեկագիր»ները (1938-1942), «Հրեղէն Սիւն» (1940), «Բարի Լուր» (1948-1954) պարբերականները, նաեւ «Համագգային» (1936) եւ «Մեծ Մասիս» (1939) տարեգիրքերը: ³⁹

³⁷ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ

³⁸ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ, թիւ 321

³⁹ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ.Ս. Ն. Պայրամեան, 2005, Գահիրէ


Յիշարժան է «Սահակ-Մեսրոպ» տպարանին «Պատանիին Գրադարանը» անունով շաբաթական հրատարակություններու Ա.Բ.Գ.Դ. շարքը, իւրաքանչիւրը 12 թիւով (1931-էն 1933), նաեւ լոյս տեսած են այլ բազմաթիւ եւ անթուակիր 13 հրատարակություններ: ⁴⁰

19. «ՅՈՅՍ» Տպարան - Գահիրէ, 1916

Տպարանին հրատարակութեամբ լոյս տեսած են «Գրիգոր Համբիկեան»ի 32 էջնոց գրքոյկը (1916) և «Եգիպտահայ Օրացոյց 1917»-ը: ⁴¹

20. «ՈՍՏԱՆ» Տպարան - Գահիրէ, 1917-1920

ՍՈԿՐԱՏ ՍԱՐԴԱՖԵԱՆ և ԸՆԿ. Տպարան - Գահիրէ



Տպարանին հիմնադիրը եւ սեփականատէրը 1917-ին եղած է Սոկրատ Սարսաֆեան, հաստատուելով՝ թիւ 22, Մանախ փողոց, Գահիրէ հասցէին:

Այստեղ լոյս տեսած են «Անապատին Յուշարձանը» (1907, բ. հտր.), «Նշոյլներ» (1916) և «Մժղուկ» (1917) պարբերականները, ինչպէս նաեւ զանազան առիթներու պրակներ եւ օտարալեզու գրքոյկներ: ⁴²

21. «ՈՍԿԵՏԱՌ» Տպարան - Գահիրէ, 1918-1966, 1966 -

Տպարանին հիմնադիրը եղած է Երուանդ Մարլեան 1918-ին, Գահիրէի Ֆակկալա թաղաշրջանին մէջ, ընկեր ունենալով Արմենակ Մանուկեանը մինչեւ 1933:

Նախապէս, Երուանդ Մարլեան 1914-ին Գահիրէի Մոհամետ Ալի թաղին մէջ հիմնած է փոքր գրաշարատուն մը, ընկերակցութեամբ Գրիգոր Համբիկեանի եւ Ե. Քրէրէթէճեանի: Այստեղ, 1915-ին հրատարակուած է «Խարաշօ» շաբաթական երգիծաբերթը քանի մը թիւով: Համեստ այս տպարանը փակուած է 1916-ին: ⁴³



«Ոսկետառ» տպարանը յաջորդաբար տեղափոխուած է *1923-ին Էմատ Էլ Տին փողոց, ** 1930-ին՝ թիւ 4, Կալալ Փողոց (Մելքոնեան Գործատան կարգին, Քօզմօկրաֆի ետեւի փողոցը), *** 1931-ին՝ Սոլիման Փաշա փողոց եւ **** 1933-ին իր վերջնական կայքը՝ Զաքարէյա Ահմէտ փողոցի (Ատէսի շէնք) ներկայի հասցէին: ⁴⁴

⁴⁰ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ

⁴¹ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ, թիւ 201,203

⁴² Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 108,110,118

⁴³ Եգիպտահայ Մշակոյթի Պատմութիւն, Աւետիս Եափուճեան, 1981, Գահիրէ, էջ 185

⁴⁴ Յուշարան (Եր.Մարլեանի յիշատակին), Գրիգոր Պասմաճեան, 1971, Գահիրէ, էջ 11

Տպարանին վարիչ-տնօրենուհին եղած է Ատրինե Մարլեան մինչև 1966: Ժամանակի մը համար հսկիչ եղած է Յաբէթ Հայրապետեան, իսկ գրաշարապետ-խմբագիրը՝ Ստեփան Համամճեան:

Գրաշարներէն եղած է Գառնիկ Ստեփանեան (1925-1930):

«Ոսկետառ» տպարանին մէջ, Երուանդ Մարլեան 1919-էն 1971 հրատարակած է «Սաւառնակ» երգիծաբերքը, նաեւ անոր «Ձերլին» շաբաթական յաւելումը՝ 1931-էն 1937, արտօնատիրութեամբ իր Տիկնոջ՝ Ատրինէի:

Այս շրջանին, տպարանը յիշուած է նաեւ իբրեւ «Տպարան-վիմագրատուն Ոսկետառ» անունով:

1965-ին, տպարանին տիրութեան ձեռնփոխութիւնը կատարուած է եւ 1 Մայիս 1966-էն տէրերը եղած են Նորայր Տէօվլէթեան եւ Պերճ Թէրզեան:⁴⁵




1969-էն տպարանին սեփականատէրը եղած է Նորայր Տէօվլէթեան:

«Ոսկետառ» տպարանէն լոյս տեսած են բազմաթիւ պարբերականներ եւ Սոկրատ Սարրաֆեանի թարգմանած վէպերուն հատորները, «Ջահակիր» գրական հաւաքածոյին Ա. գիրքը (1919), «Ջահակիր» տարեգիրքը (1948), «Ոսկետառ» Մատենաշար»-էն՝ Աշոտ Պատմագրեանի հեղինակած «Գանձարան Հայ Երգերու» 6 հատորները (1940), Գրիգոր Մամուր Ֆաթիմիի Երագահան, Կախարդագիրք, Բախտագուշակ եւ այլ «Համայնագիտարան»ները (1935-1937), եւ բազմաթիւ հայերէն նաեւ օտարալեզուով գիրքեր, կանոնագիրներ, տեղեկագիրներ, ձեռնարկներու պրակներ:⁴⁶

22. «Գ.ՃԻՀԱՆԵԱՆ» Տպարան - Գահիրէ, 1919-1921

Տպարանին հիմնադիրը եղած է Գրիգոր Ճիհանեան 1919-ին, հաստատուելով Քասր Էլ Նիլ Փողոց, Գահիրէ (Օնոգտի-պաքի կից) հասցէին:⁴⁷



1919-ին, «Գ.Ճիհանեան» տպարանին մէջ տպագրուած են Թովմաս Մկրտիչեանի «Տիգրանակերտի Ջարդերը եւ Քիւրտերու Գազանութիւնները» հատորը, «Ջարթօնք» կիսամսեային քանի մը համարները (1919), Վարդան Գեորգեանի

⁴⁵ «Սաւառնակ» Շաբաթաբերք, 1966, Գահիրէ, թիւ 15

⁴⁶ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ
Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ

⁴⁷ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ, Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ, թիւ 136
«Մարտիկ Աղա», Երգիծական Շաբաթաբերք, 1921, Գահիրէ

«Ջահակիր» կիսամսեային Բ.գիրքը (1919, նաեւ Վարդան Չագարեանի «Մարտիկ Աղա» երգիծաթերթի 4-էն 25 համարները (1921): ⁴⁸

23.«ԵՓՐԱՏ» Տպարան - Գահիրէ, 1920

Լոյս տեսած է «Սակացոյց Ս.Աստուածածին Եկեղեցւոյ Առաջնորդարանի Ս. Մինաս մատրան և Ազգ. Գերեզմանատան» 12 էջնոց պրակը 1920-ին: ⁴⁹

24. «ՎԱՐԴԱՆ ՉԱԳԱՐԵԱՆ» Տպարան – Գահիրէ ,1921

Տպարանը հիմնուած է 1921 Յունուարին, զաւեշտագիր Վարդան Չագարեանի կողմէ, տպագրելու համար իր խմբագրած «Մարտիկ Աղա» պարբերաթերթը:



Պայմաններու բերումով, տպուած են զաւեշտաթերթին միայն առաջին 2 թիւերը:

Չագարեանի տպարանը փակուած է շուտով, եւ իր զաւեշտաթերթը շարունակուած է լոյս տեսնել «Ճիհանեան» եւ «Փարոս» տպարաններէն մինչեւ Դեկտեմբեր 1921 (42 թիւ): ⁵⁰

շարունակութիւնը հաջորդիւ...

⁴⁸ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ

Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ

⁴⁹ Հայ Գիրքը Եգիպտոսի Մէջ (1888-2012), Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2012, Գահիրէ, թիւ 300

⁵⁰ Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ , Տոքթ.Ս.Ն.Պայրամեան, 2005, Գահիրէ, էջ 136

ԱԼԻՍԱ ԱԴԱՄՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայաստանի ազգային գրադարանի
Անձեռնմխելի գրականության բաժին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ
ԵՆԹԱԲԱԺՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ**



1832 թ. հիմնադրվել է Երևանի գավառական դպրոցի գրադարանը, որը նախախորհրդային Հայաստանում Էջմիածնի Մատենադարանից հետո եղել է ամենախոշոր և հատուկ հանրային գրադարանը:

Տարիների հետ հարստանալով՝ գրադարանի հավաքածուն (18.000 միավոր) դարձավ Հայաստանի պետական հանրային գրադարանի /այժմ ՀԱԳ/ ստեղծման

հիմքը¹: Հայաստանի Ազգային գրադարանի գրքային ունեցվածքը ձևավորվել է մտավորականների, կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների և խմբագրությունների կողմից կատարված գրականության նվիրատվությունների և, մասամբ, գնումների հիման վրա, որոնց մի մասը պահպանվում են առանձին՝ Անձեռնմխելի գրականության բաժնի նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժնում: Այստեղ պահպանվում է 30 մեծ և փոքր հավաքածուներ 34 լեզուներով՝ թվով 115. 937 միավոր գրականություն: Դրանք նշանավոր մարդկանց անձնական և ուսումնական հաստատությունների գրադարաններ են (Լեո (Առաքել Բաբախանյան), իշխան Նիկողայոս Արղության-Երկայնաբազուկ, Ստեփան Սերեբրակյանց, Գրիգոր Զոհրապ, Գաբրիել Սունդուկյան, Ավետիք Իսահակյան,

¹ Հայաստանի ազգային գրադարանի պատմության ուրվագծեր (1832-1925) / Կազմ. Ս. Հ. Գրիգորյան, Ե., 2007:

Թեոդիկ (Թեոդորոս Լաբճինճեան), ինքնագրեր /նշանավոր մարդկանց մակագրություններով/, Լազարյան ճեմարանի գրադարան, Երևանի արական գիմնազիայի գրադարան և այլն): Այս հավաքածուների մասին որոշ մանրամասներ շարունակաբար կներկայացնենք Ձեր ուշադրությանը:


**ԻՇԽԱՆ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԴՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱՔԱԶՈՒԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ
(1845-1916)**



Նիկողայոս Արդության-Երկայնաբազուկը ծնվել է 1845 թ. Թիֆլիսում: Եղել է հայտնի հայ իշխանական տոհմի ներկայացուցիչ, Նորին Կայսերական Մեծության սենեկապետ, պետական խորհրդական և երեք անգամ (1891-1893 թթ., 1895-1898 թթ., 1903-1904 թթ.) ընտրվել է Թիֆլիսի քաղաքապետ: Ամիրսպասալար Սարգիս Զաքարյանը վրաց Գեորգի III թագավորից ստացել է «Մխարգրձելի» (Երկայնաբազուկ) անունը: Զաքարյանների ժառանգորդները 13-րդ դարի վերջում, որպես վասալ, մոնղոլների Արդունխանից (1284-1391 թթ.) ստացել են «Արդութ» կամ «Արդուն» անունը, որը չաղաթայերեն նշանակում է «թիկունք», «կոնակ»

և համապատասխանում է վրաց «Մխարգրձելի» անվանը: XVI դարից Զաքարյան իշխաններն ընդունել են Արդության ազգանունը և հանդես եկել Արդության-Երկայնաբազուկ անունով: 1783 թ. Եկատերինա II կայսրուհին, այնուհետև՝ 1800 թ. մարտի 22-ին կայսր Պավել Առաջինը հրամանագրերով արքեպիսկոպոս Հովսեփ Արդության-Երկայնաբազուկին ու նրա տոհմին շնորհել են ռուսական կայսրության ազնվականի տիտղոս: Զաքարյանները եղել են ոչ միայն Հայաստանի տիրակալները, այլև վրաց արքունիքում նրանց է պատկանել սպարապետությունը, սահմանակալ կուսակալությունը, վրաց պետության ամենաբարձր պաշտոնը արքայական թագից հետո՝ աթաբեկությունը: 1892 թ. Նիկողայոս Արդության-Երկայնաբազուկը եղել է Զրկինյանց Սբ. Կարապետ եկեղեցու հոգաբարձու: 1900 թ. իր նվիրատվությամբ (300 ռուբլի) նա աջակից է եղել Թիֆլիսի «Ժողովրդական տան» շինարարությանը: 1903 թ. քաղաքապետ Նիկողայոս Ար-

ղության-Երկայնաբազուկի գործուն միջամտությամբ և հետևողականությամբ իրականացվել է Երևանյան հրապարակում գտնվող «Քաղաքային տան» շինարարությունը: Նա աջակցել է հատկապես կրթական ոլորտի խնդիրների լուծմանը. մինչև իր մահը եղել է Թիֆլիսի արական գիմնազիայի պատվավոր հոգաբարձուն: Հայտնի է, որ իշխանը Թիֆլիսում հիմնել է դպրոց արատածին երեխաների համար. «... հիմնեց խուլ-համբերու վարժարան մը, որուն հոգաբարձութեան նախագահն էր մինչև վերջը»:¹ Իշխան Նիկողայոս Արղության-Երկայնաբազուկը վախճանվել է 1916 թ.: Թաղված է Սանահին վանքի տոհմական գերեզմանատանը: Նիկողայոս Արղության-Երկայնաբազուկը եղել է այդ ժամանակաշրջանի ակնառու մտավորականներից և ունեցել է հարուստ գրադարան, որը բարեբախտաբար ժառանգություն է հասել հայ ժողովրդին: Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարությունը, հակառակ ժամանակի դժվարին և անբարենպաստ պայմաններին, կարողացել է գնել այդ գրադարանը 1920 թ., իսկ 1921 թ. Թիֆլիսից այն տեղափոխվել է Երևան: Այսօր այդ գրադարանի հարուստ ու շքեղ հրատարակությունները պահպանվում են Հայաստանի ազգային գրադարանի Անձեռնմխելի գրականության բաժնի Նվիրատվությունների և անհատական հավաքածուների ենթաբաժնում:



Գրականությունը բազմալեզու է, ներառում է արվեստին, փիլիսոփայությանը, պատմագիտությանը, գրականությանը, հոգեբանությանը, կրոնին, հնագիտությանը, բնական գիտություններին և այլ բնագավառներին վերաբերող 16.242 միավոր գրականություն: Հավաքածուի մեջ կարելի է առանձնացնել կովկասագիտության, Ռուսաստանի պատմու

Vetauite, Alphonse Charlemagne: Tours: թյան և մշակույթի, համաշխարհային պատմության և քաղաքակրթության, արևմտաեվրոպական և ռուսական դասականների մասին
Alfred Mame et fils, 1880.
XXV, 556 p., 28 sm.

գրականությունը: Մատենագիտական հազվագյուտ նմուշներ են Եվրոպայի ճանապարհորդներ Ադամ Օլեարիոսի, Շարդենի և այլոց ճանապարհորդական գրքերը, որոնք հետաքրքիր նյութեր են պարունակում Ռուսաստանի և Կովկասի ժողովուրդների մասին: Նիկողայոս Արղության-Երկայնաբազուկի հարուստ գրադարանը կովկասագիտական բացառիկ արժեք է ներկայացնում:

¹ Կարապետյան Սամվել Գևորգի: Թիֆլիսի քաղաքագլուխները = Меры Тифлиса (Тбилиси) = Mayors of Tiflis (TBILISI) : Հայկ. ճարտ. ուսումնասիրող կազմակերպ. (RAA) գիտ. խորհուրդ. - Երևան : ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003.- 128 էջ :

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

*Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի
գիտական գծով փոխտնօրեն*

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ**



ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ

**ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ
ՀԱՍՄՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Երևանի քաղաքապետարանի Ավետիք Իսահակյանի անվան գրադարանը բացվել է 1935 թ. օգոստոս ամսին, Ավ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանից առանձնացված երկու հազար կտոր գրականությամբ: Տարիների ընթացքում գրադարանը պարբերաբար համալրվել է նաև նվիրատվությունների միջոցով և այսօր գրադարանային հավաքածուն կազմում է 700.000 միավոր:

1955 թ. - Ավետիք Իսահակյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ գրադարանն անվանակոչվեց Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի անունով:

1979 թ. - Երևանի քաղխորհրդի գործկոմի մայիսի 16-ի որոշմամբ մասսայական գրադարանների բազայի վրա ստեղծվեց Երևանի մեծահասակներին սպասարկող գրադարանների կենտրոնացված համակարգը՝ ԳԿՀ, որի կենտրո-

նական գրադարանը դարձավ Ավետիք Իսահակյանի անվան գրադարանը: ԳԿՀ-ի ենթակայության տակ գտնվում էին 47 գրադարան-մասնաճյուղեր:

1993 թ. - Բացվեցին գրադարանի արվեստի, մամուլի, օտար լեզվի և տեխնիկական գրականության բաժինները:

1995 թ. - Երքաղխորհրդի գործկոմի դեկտեմբերի 22-ի որոշմամբ միավորվեցին մեծահասակներին /ԳԿՀ/ և մանուկներին /ՄԳԿՀ/ սպասարկող գրադարանների կենտրոնացված համակարգերը: Ավ. Իսահակյանի անվան գրադարանը դարձավ միավորված համակարգի կենտրոնական գրադարան:

1998 թ. - Երևանի քաղաքապետարանի հոկտեմբերի 27-ի որոշմամբ գրադարանը դարձավ Երևանի համայնքային գրադարանների մեթոդ-մատենագիտական համակարգող կենտրոն:

2002 թ. - ՀՀ կառավարության նոյեմբերի 28-ի որոշմամբ Ավ. Իսահակյանի անվան գրադարանը վերակազմակերպվեց «Ավետիք Իսահակյանի անվան ԿԳ» ՊՈԱԿ-ի՝ իր 7 գրադարան-մասնաճյուղերով և առանձին շենքերի մեջ տեղակայված երկու բաժիններով՝ Արվեստի /Մոսկովյան 31/184/ և Տեխնիկական /Տիգրան Մեծի 30/:

2001 թ. - Գրադարանը դառնում է «Հայաստանի գրադարանների կոնսորցիում»-հիմնադիր անդամ:

2004 թ. - Գրադարանը դառնում է «Հայկական միացյալ գրադարանային ավտոմատացված ցանցի» ծրագրի հիմնադիր-մասնակից:

2005 թ. - Ապրիլին ԿԳ-ում բացվում է Հայաստանում առաջին «Ամերիկյան անկյունը»՝ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ: Այն հազեցած է տեղեկատվական ժամանակակից սարքավորումներով և ընթերցողներն անվճար օգտվում են համացանցային /ինտերնետ/ ծառայություններից: «ԱԱ»-ն պարբերաբար համալրվում է նոր գրականությամբ և ապահովված է էլեկտրոնային պարբերականների և այլ ռեսուրսների բաժանորդագրությամբ:





2008 թ. - Ապրիլին ՀՀ-ում գործող «Բրիտանական խորհրդի» աջակցությամբ ԿԳ-ում բացվում է «Բրիտանական կենտրոնը», որը ևս մատուցում է համացանցային և տեղեկատվական անվճար ծառայություններ:

2010 թ. - Գրադարանի Բաղրամյան 20 հասցեում գործող մասնաճյուղում բացվեց «Ասիական կենտրոնը»՝ ՀՀ-ում Հնդկաստանի, Չինաստանի, Լիբանանի և Ղազախստանի դեսպանատների աջակցությամբ, որն այժմ գործում է ՀՈԱԿ-ի Լ. Մոտալովայի անվան թիվ 33 գրադարան-մասնաճյուղում:

2011 թ. - Ստեղծվեց ԿԳ-ի ավտոմատացված էլեկտրոնային գրացուցակը:

2012 թ. - Սեպտեմբերին ԿԳ-ում սկսվեց /ՀՀ-ում հանրային գրադարաններից առաջինը/ ընթերցողների «ԷԼԳՐԱԴ» ծրագրով էլեկտրոնային սպասարկում և իրականացվեց գրադարանային գործառույթների ավտոմատացում:

2013 թ. - Հունվարից «Ա. Իսահակյանի անվան ԿԳ» ՀՈԱԿ-ի մասնաճյուղերում սկսվեց Հայաստանի գրադարանների համահավաք քարտարանի գործարկումը: Ընթերցողները կարող են օգտվել «Ոսկե շղթա 1», «Ոսկե շղթա 2» և «Ոսկե շղթա 3» թվային գրականության շտեմարաններից: Տեսողական խնդիրներ ունեցող ընթերցողների համար գրադարանում տեղակայված է նաև «Արև» ծրագիրը:

2014 թ. - Մարտին Երևանի քաղաքապետարանի և Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության համագործակցության ծրագրով Կենտրոնական գրադարանում բացվեց «Ֆրանկոֆոնիայի կենտրոն» բաժինը, որը հագեցած է տեղեկատվական ժամանակակից սարքավորումներով, ֆրանսերեն լեզվով մեծարժեք գրականությամբ և էլեկտրոնային այլ բազաներով:



ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ 2004 թվականից ԿԳ-ն միացել է համաշխարհային տեղեկատվական ցանցին /ինտերնետ/՝ ապահովելով ընթերցողների արագ, մատչելի և անվճար տեղեկատվական սպասարկումը, նաև ԱՐՄԻՆԿՈ և ՅՈՒՔՈՄ ընկերությունները տրամադրում են անլար ինտերնետ հաս-

նեղիություն: ՎԻՎԱՍԵԼ-ի անլար հասանելիության կապով ապահովված են նաև ՀՈԱԿ-ի բոլոր գրադարան-մասնաճյուղերը՝ Երևանի քաղաքապետարանի աջակցության ծրագրով: ՀՈԱԿ-ի աշխատակիցները ԿԳ-ի համակարգչային բաժնում պարբերաբար կատարելագործում են իրենց համակարգչային-օպերատորական գիտելիքները՝ ձեռք բերելով նոր տեխնիկական հմտություններ:

Շարունակական բնույթ են կրում ՀՀ-ում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իրանի և այլ երկրների դեսպանատների և ՀՈԱԿ-ի համագործակցության ծրագրերը:

Մշտապես նորացվում են համաշխարհային տեղեկատվական դաշտում կազմակերպության երկու անհատական էջերը //հասցե <http://www.isahakyanlibrary.am/> և նաև <https://www.americancorners.am/>, որտեղ տեղեկատվություն է տրված գրադարանի պատմական տարեգրության և կառուցվածքի, ծառայությունների մասին, նաև մշտապես թարմացվում է «Նորություններ» հատվածը, «Թվիթեր» սոցիալական ցանցում՝ «Isahakyan Library» էջը: ՀՈԱԿ-ի «Իսահակյան գրադարան» էջը Դիմերեսում /Facebook/ մշտապես թարմացվում է ԿԳ-ի աշխատանքային խմբի կողմից: Դիմերեսում առանձին էջեր են վարում նաև ԿԳ-ի «Ամերիկյան, Բրիտանական, Ֆրանկոֆոնիայի և Ասիական կենտրոն» բաժինները, ՀՈԱԿ-ի թիվ 15, 21, 27, 28, 29, 33, 36 գրադարան-մասնաճյուղերը և ԿԳ-ի արվեստի և տեխնիկական գրականության բաժինները: Գրադարանը համագործակցում է ՀՀ-ում գործող մշակութային և կրթական կազմակերպությունների /պետական և հասարակական/ հետ՝ այդ կերպ փորձելով համատեղել աշխատանքները հանրապետությունում տարվող մշակութային և կրթական ծրագրերի ուղղությամբ: Տեղեկատու-մատենագիտական քարտարանները և թղթապանակները մշտապես համալրվում են նոր նյութերով՝ տեղեկատվական տարբեր աղբյուրներից: Համալրվում է «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանը մամուլի էջերում» մատենագիտական ցանկը: Դիմերեսում մշտապես կազմակերպվում է խաղ-վիկտորինա՝ նվիրված գրականությանը, արվեստին, պատմությանը և գիտության այլ ոլորտներին: Ամփոփումից հետո այդ հեղինակներին և թեմաներին նվիրված կազմակերպվում են գրական ընթերցումներ և ցուցահանդեսներ: Իսկ վիկտորինայի հաղթողներին հանձնվում են նվերներ՝ գրքեր: Գրքափոխանակության ֆոնդերի հաշվին կատարվում է ֆոնդերի հետադարձ համալրում՝ ՀՈԱԿ-ի գրապահոցային հավաքածուից և առանձին բաժիններից, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մասնագիտական գրականությամբ ֆոնդերի համալրմանը:

Մշտապես ուսումնասիրվում, խմբագրվում և համեմատվում են բոլոր տիպի գրացուցակները: Շարունակում են համահավաք գրացուցակների էլեկտրոնային տեղեկատվական բանկ մուտքագրման աշխատանքները՝ ՀՈԱԿ-ի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում: ԿԳ-ում ընթերցողների տրամադրության տակ են նաև «Էլեկտրոնային ավտոմատ գրացուցակները», որոնք տեղեկատվություն են տրամադրում ինչպես «Ա. Իսահակյանի անվան ԿԳ» ՀՈԱԿ-ի, այնպես էլ ՀՀ-ի խոշոր գրադարանների գրքային ֆոնդի մասնակի հավաքածուների մասին: Տարվա ընթացքում գրադարանը համալրվում է մոտ տաս հազար միավոր գրականությամբ, երկու տասնյակ անուն պարբերական մամուլով՝ բաժանորդագրությամբ և տարբեր կազմակերպություններից ու անհատներից՝ նվիրատվությունների միջոցով: Պարբերական մամուլի սպասարկումը ԿԳ-ում և մասնաճյուղերում իրականացվում է նաև էլեկտրոնային անվճար եղանակով: Գրադարանը կազմակերպում է անգլերեն, ֆրանսերեն անվճար ուսուցման դասընթացներ, խոսակցական ակումբներ: Գրադարանում գործում է երիտասարդ ստեղծագործների «Բողբոջներ» գրական խմբակը և «Իսահակյան» թատերախումբը: 2000 թվականից գրադարանը համարվում է «ՆՌԱՆ ՀԱՏԻԿ» մանկապատանեկան թատերական փառատոնի հիմնադիր և կազմակերպիչ: Գիրք-գրադարան-ընթերցող կապն ավելի ամրապնդելու, որպես նոր ընթերցողների ներգրավման, մշակութային և կրթադաստիարակչական քաղաքականության իրականացման կարևորագույն միջոց, գրադարանում կազմակերպվում են մասսայական բնույթի միջոցառումներ, հանդիպումներ գրողների, մտավորականների հետ, տարաբնույթ ցուցահանդեսներ, որպես նոր ընթերցողների ներգրավման, մշակութային և կրթադաստիարակչական քաղաքականության իրականացման կարևորագույն միջոց և ամեն օր գրադարանային ավտոմատացված գործառույթների, տեղեկատվական-մատենագիտական ծառայությունների շնորհիվ իր դռներն է բացում 700-1000 ընթերցողների առջև:

Այսօր գրադարանն իրականացնում է մշակութային քաղաքականություն և գործառույթների որակն ու մատչելիությունը միտված են ընթերցողների տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի իրագործմանը, 80-ամյա պատմության ընթացքում ձևավորված գրքային և տեղեկատվական այլ կրիչներով համալրված հարուստ գրադարանային հավաքածուի, բազմաթիվ անվճար մշակութային-կրթական ծրագրերի, տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներով հագեցվածության, միջազգային տարբեր մշակութային և կրթական կազմակերպությունների հետ հաջողված համագործակցության ծառայությունների կազմակերպմանը:

**ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ
350-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԻՂՆԵՅՈՒՄ**



2017 թ. ապրիլի 25-ից մինչև մայիսի 9-ը Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանի և Համազգային մշակութային միության Ավստրալիայի մասնաճյուղի հրավերով Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը այցելեց Սիդնեյ: Այցի շրջանակում նախատեսված էին հանդիպումներ Սիդնեյի հայ համայնքի հետ, այցելություններ հայկական դպրոցներ, հանդիպումներ ուսուցիչների հետ, դասախոսությունների շարք նվիրված հայ գրատպության պատմությանը, հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի 350-ամյակին, դասախոսություն Սիդնեյի հայ երիտասարդների համար, այցելություններ Ավստրալիայի ազգային գրադարան /Կանբերա/ և Սիդնեյի հանրային գրադարան, խորհրդատվությունների անցկացում տեղի հայ գրադարանավարների համար:

Մայիսի 3-ին Նյու Սաութ Ուելս նահանգի (կենտրոնը Սիդնեյ) պառլամենտում հայ համայնքի և Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի համատեղ

ջանքերով կազմակերպվեց դասախոսություն՝ նվիրված հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի 350-ամյակին: Օրվա բանախոսն էր Տիգրան Զարգարյանը, ով հանդես եկավ «ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ՏՊԱԳՐԻՉԸ: Ոսկան Երևանցին ու հայերեն Աստվածաշունչը» թեմայով զեկուցումով:

Պառլամենտի նախասրահում կազմակերպվել էր ցուցահանդես, ուր ներկայացված էին տարբեր գաղթօջախներում հրատարակված հայ գրատպության գոհարներ:

Միջոցառումն իր ներկայությամբ պատվեց Նյու Սաութ Ուելս նահանգի վարչապետ Գլադիս Բերեջիկլեանը: Ներկա էին նաև Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայ համայնքների և հոգևոր դասի ներկայացուցիչներ, կրոնական տարբեր դավանանքների սպասավորներ, պատգամավորներ, նախարարներ, քաղաքական գործիչներ:



Հանդիսության ավարտին, Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը Ավստրալիայում Արցախի խնդրի հանրահռչակման, հայ համայնքի մշակութային կյանքում ունեցած ակտիվ մասնակցության համար վարչապետ Գլադիս Բերեջիկլեանին պարգևատրեց Հայաստանի ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով:

Տեղի հայ համայնքը Հայաստանի ազգային գրադարանին նվիրեց երկու անհայտ խմորատիպ պարբերականների լրակազմեր, 1801-1930 թթ. հրատարակված հայերեն գրքերի նմուշներ և Սիդնեյում ու Մելբուռնում հրատարակված հայ մամուլի լրակազմեր, որոնք բացակայում են Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներից:



Գլեդիս Բերեջիկյանը պարգևատրվում է Հայաստանի ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Մոսկվայի Հայ Առաքելական եկեղեցու տարածքում բացվել է գրադարան, որը կրում է Գրիգոր Նարեկացու անունը: Մոսկվայաբնակ հայերը և բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են հայ հոգևոր և մշակութային ժառանգությամբ, կարող են ծանոթանալ մի շարք արժեքավոր հնատիպ և նոր գրքերի հետ: Գրադարանի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 2017 թ. մայիսի 19-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկ-

րորդի գլխավորությամբ, բացմանը ներկա էին նաև հոգևոր խորհրդի անդամներ: Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի ուղեկցությամբ հյուրերը շրջեցին գրադարանում, ծանոթացան ֆոնդին, որը ձևավորվել է հիմնականում նվիրատվության շնորհիվ: Այսօր գրադարանն ունի մոտ 3000 կտոր գիրք, 60 անուն պարբերական մամուլ, 170 միավոր տպագիր այլ արտադրանք (բացիկ, բրոշյուր, քարտեզ, ալբոմ), 21 միավոր ինֆորմացիայի ոչ ավանդական կրիչներ:

Գրականության մեծ մասը ռուսերեն լեզվով է: Արժեքավոր գրքերից է 17-րդ դարի ձեռագիր Ավետարանը, որը նվիրել են Վլադիմիր և Իրինա Դաշյան ները: Գրքի առաջին էջը վկայում է, որ այն ստեղծվել է Հակոբ 4 -րդ Զուղայեցի (1655-1680 թթ) կաթողիկոսի օրոք:



Գիրքը գրվել է Սուրբ Աստվածածին եկեղեցու դպիր Սուքիասի կողմից, համաձայն որի այն գտնվել է «Ձագեծորի երկրում, Գորես գյուղում»: Հնատիպ գրքերի մեծ մասը կրոնական և պատմական արժեք ունեցող գրքեր են՝ հրատարակված Ամստերդամում, Վենետիկում, Երուսաղեմում, Էջմիածնում: Հարկ է նշել Սահակ Կարապետյանի նվիրած Նիկոլաս

Պատրիկ Ուայսմենի «Ֆաբիոլա կամ եկեղեցին Կատակոմբայում» գրքի թարգմանությունը, հրատարակված Սուրբ Ղազար կղզում, որի առաջին էջերը վկայում են, որ գիրքը թարգմանվել է Մուրադ Ռաֆայելյան վարժարանի 4 -րդ կուրսի ուսանողների կողմից: Մարատ Սուդանցը և Անժելա Գոլյանը նվիրել են 1865 թ. Սուրբ Ղազար կղզում հրատարակված «Հայկազյան բառարանը», Րաֆֆու «Խենթը», որի կազմի վրայի գրությունը վկայում է, որ այն 1891 թ. օգոստոսի 5-ին նվիրել են Սամսոն անունով մեկին: Ենթադրվում է, որ այն 1881 թ. Շուշիում առաջին անգամ հրատարակված գրքի եզակի օրինակներից է:



Օրերս Արտակ Ղազարյանը նվիրել է հոր՝ պատմաբան Հրանտ Պողոսյանի անձնական հավաքածուն (700 կտոր գիրք), որն առանձնանում է հնատիպ ու արժեքավոր մի շարք գրքերով.

1. Գիրք, որ կոչիր ընդհանրական, ի կայսիրապիրճ մայրաքաղաքս Սանկտ Պետերբուրգ, ի տպարանի Խալդարեանց Խօջամալի որդի ի քո հանգուցեալ Պարոն Գրիգորին, 1788 թ.

2. Ղազարայ Փարպեցոյ արարեալ պատմագրութիւն, ի Վենետիկ, ի վանս սբյն Ղազարու, 1793 թ.

3. Հմտութիւն մանկանց, ի պէտս ազնուազարմ միրա մանկան Ալեքսանեան, մասն Գ, ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու 1818 թ.

4. Յովհաննոս Ոսկերեքեանի Կոստանդինուպօլսի եպիսկոպոսապետի Յաւետարանագիրն, Մատթէոս, գիրք կրկին, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, ՅԱՄԻ 1826 ՌՄՀԵ: Սա հայրենիքից դուրս գտնվող մոսկվայաբնակ հայերի համար գիտական և մշակութային մի կրթօջախ է, որը նպատակ ունի պահպանել մեր ազգային ժառանգությունը:

